Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

3676

Սապան գինու
տպաքինց...

Վենետիկ
1865

2010

2001

271

# ՑՈՒՑԱԿ

## ԳՐՈՑ ՏՊԱԳՐԵԼՈՑ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵՆԷ

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ Ս. ՂԱԶԱՐՈՒ

1865

Ջ17.4
Ծ-79

017.4

# ՑՈՒՑԱԿ

# ԳՐՈՑ ՏՊԱԳՐԵԼՈՑ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵՆԷ



ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ Ս. ՂԱԶԱՐՈՒ

1865

9596

Մէկ աստղանիշ (*) մատեանները սակաւագիւտ են, կըրկնակ աստղանիշները (**) անգիւտ ։

Գրոց գները գրուած են միջակ կազմին վրայ ֆրանգի հաշուով, Կ.պօլսոյ Սեղբոս խանի գրավաճառի սենեկին մէջ վաճառման գնոյն համեմատ ։ Փառաւոր կամ ոսկեկազմ մատեաններուն գինը, գրքին մեծութեանը համեմատ 1/2 ֆրանգէն մինչև 10 ֆրանգ տարբերութիւն կ'ունենայ մեր դրած գնէն ։

Այն գրքերը որոց լեզուն չեմք որոշած, պէտք է հասկանալ նախնեաց լեզուաւ գրեալ, որ է բուն հայերէն լեզուն ։ Իսկ ռամկօրէն կամ աշխարհաբար լեզու ըսելով կը հասկանամք խօսակցութեան լեզուն ըստ կարի կոկուած, որ և այժմ է նաև գրական լեզու ։

# ՑՈՒՑԱԿ

## ԳՐՈՑ ՏՊԱԳՐԵԼՈՑ Ի ՎԵՆԵՏԻԿ

## Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ՂԱԶԱՐՈՒ

### Ա

Ֆր. Ս.

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ. Ժամանակակից պատմութիւն Տրդատայ Թագաւորի և Գրիգորի Լուսաւորչի, գրեալ Տրդատ Թագաւորին ատենադպրէն Ագաթանգեղայ: Գործ նախնեաց չորրորդ դարու, ոսկեղէն շարադրութեամբ: Տպագրեալ յամին 1835, և վերջին անգամ 'ի 1862: 5, 50

—Նոյն Իտալերէն թարգմանեալ, և տպագրեալ յամին 1843: 6,

ԱԶԳԱՍԷՐ. բարոյական գրուած ռամկօրէն լեզուաւ, 'ի յորդոր ազգասիրութեան: Աշխատասիրութիւն Հ. Ղուկաս Վ. Ինճիճեան: Տպ. 1815: 2,75

* ԱԼՊԵՐՏ. համառօտութիւն աստուածաբանութեան մեծին Ալպերտի. աշխատասիրեալ 'ի Մխիթարայ աբբայէ: Տպագրեալ յամին 1715: 2,75

** ԱԼՏԻՆԻ. տետրակ փոքրիկ, որ և կոչի Հրարուեստութիւն, յօրինեալ Ալտինի իտալացի ասպետէ, և թարգմանեալ ռամկօրէն լեզուաւ, որ ուսուցանէ կրակի մէջ անվնաս մնալու հարկաւոր միջոցները: Տպագրեալ յամին 1831:

** ԱԿՆ ՀՈԳԻՈՑ. փոքր աղօթագիրք: Տպ. 1785.

ԱՂԱԻՆԻ. բարոյական գեղեցիկ վիպասանութիւն Մերիմէ գաղղիացւոյ. աշխարհաբար լեզուաւ թարգմանեալ և տպագրեալ յամի 1864: 2,

ԱՂԲԱՐ ԹՈՎՄԱՍ. *վիպասանութիւն Հենրիկ Պիչըր Ստոյ տիկնոջ ամերիկացւոյ, գերեաց ազատութեան վերայ։ Թարգմանեալ ռամկօրէն լեզուաւ 'ի Հ. Գրիգորիս Մէրճանճեան։ Տպագրեալ յամին* 1854, *երկու հատոր*։ 9,

* ԱՂԲԻՒՐ ԲԱՐԻ. *հոգեւոր խրատներ և օգտակար պատմութիւններ. յօրինեալ հաւաքածոյ Թարգմանութեամբ Թիֆլիզեցի Պետրոս վարդապետէ, և տպագրեալ Մխիթարայ աբբահօր սրբազնութեամբ յամին* 1722։

ԱՂՕԹԱԳԻՐՔ ՆԵՐՈՂՈՒԹԵԱՆՑ. *փոքրիկ աղօթագիրք ներողութեանց վերայ, ռամկօրէն լեզուաւ։ Տպագրեալ յամին* 1833։ 1,25

ԱՂՕԹԱԳԻՐՔ Հ. ՄԿՐՏՉԻ ԱՒԳԵՐԵԱՆ. *փոքրիկ աղօթագիրք ռամկօրէն լեզուաւ տղայոց համար, կարևոր աղօթքներով։ Առաջին տպագրութիւն յամի* 1832. *վերջին* 1865։ 1,50

ԱՂՕԹԱԳԻՐՔ Հ. ՂՈՒԿԱՍՈՒ ԻՆՃԻՃԵԱՆ. *աղօթագիրք մեծերու համար ռամկօրէն լեզուաւ. որոյ մէջ կան ամէն տեսակ աղօթք ըստ պատշաճի տօնից և աւուրց, և զարդարեալ գեղեցիկ պատկերներով։ Առաջին տպագրութիւնը եղած է յամին* 1822, *և չորրորդ վերջին տպագրութիւնը* 1849։ 4,50

ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑ Ի ՊԷՏՍ ՔԱՀԱՆԱՅԻՑ. *աղօթք պատրաստութեան և գոհութեան պատարագի, քահանայից համար։ Տպագրեալ յամին* 1832։ 1,25

ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑ ՍՐԲՈՅՆ ՅՈՎՍԵՓԱՅ ԱՍՏՈՒԱԾԱՀՕՐ. *աղօթք սրբոյն Յովսեփայ, վարդարանի, Աստուածածնի եօթն ցաւոց, և ուրիշ զանազան աղօթք։ Տպագրեալ յամին* 1781։ 1,75

ԱՄԱՐԱՆՈՑ ԲԻՒԶԱՆԴԵԱՆ. *Նկարագրութիւն գիւղօրէից Նեղուցին Կ. պոլսոյ (Պօղազ իչի). 'ի Հ. Ղուկաս Վ. Ինճիճեան։ Տպագրեալ յամին* 1794։ 2,

— *Նոյնն Իտալերէն Թարգմանեալ*։ 1831։ 2,

ԱՄՍՕՐԵԱՅ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՔ ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ԽՐԱՏՔ ԿԱՐԵՒՈՐՔ. *քաղուածոյ Թարգմանեալ Իտալերէն լեզուէ 'ի Հ. Մկրտիչ Վ. Աւգերեան։ Տպագ.* 1853։

ԱՅԲԲԵՆԱՐԱՆ ՀԱՅԵՐԷՆ. Նոր քերական տղայոց ընթերցումն ուսուցանելու համար ռամկօրէն բացատրութեամբ. աշխատասիրութիւն Հ. Արսէն Վ. Բագրատունւոյ: Տպագրեալ յամին 1850: 0,60

ԱՅԲԲԵՆԱՐԱՆ ՅՈՒՆԱՐԷՆ. հայերէն և յունարէն դիմացէ դիմաց: Տպագրեալ յամին 1819: 0,30

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՀԻՒԱՆԴԱՑ. քահանայից հիւանդաց քով գտնուած ժամանակ հարկաւոր եղած աղօթքները և պատրաստութիւնները: Տպագ. 1834: 2,25

ԱՆՁԻՆՔ ՆՈՒԻՐԵԱԼՔ. Իտալերէն թարգմանութիւն Անձինք նուիրեալք շարականին Հախվախեանց: Տպագրեալ յամին 1843: 0,60

— Նոյն գործը տպագրեալ է նաև Իտալերէն Ագաթանգեղոսին ետև:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ՉՈՐԻՑ ՄԱՍԱՆՑ ԱՇԽԱՐՀԻ. ընդարձակ աշխարհագրութիւն քաղաքական, տասն և մի հատոր, որոյ վերջին հատորն է Նոր Հայաստանի վերայ, և երկոտասաներորդ հատորն է ուսումնական աշխարհագրութիւն, որ կոչի առանձինն Համարակախօսութիւն: Աշխատասիրեալ 'ի Հ. Ղուկաս Վ. Ինճիճեան: Տպագրեալ յամին 1802–1804–1805 38,50

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ. Նոր և ընդարձակ, մեծադիր և միահատոր, պատկերազարդ. խօսի աշխարհիս հինգ մասանց վերայ, և առանձինն Հայաստանի վերայ. ոճով և նորութեամբն լաւագոյն քան զվերինն: Աշխատասիրութիւն Հ. Ղեւոնդեայ Վ. Ալիշան: Տպագրեալ յամին 1854–55: 30,

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՌՕՏ. է բնական քաղաքական և ուսումնական աշխարհագրութիւն համառօտ, ռամկօրէն լեզուաւ, դպրատանց համար. աշխատասիրեալ 'ի Հ. Ստեփան Վ. Եաղըճեան: Առաջին տպագրութիւն յամին 1839, վերջին 1860: 5,

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ. համառօտ աշխարհագրութիւն հին և Նոր Հայաստանի և անոր սահմանակից աշխարհաց, որք են փոքր Հայք, Վիրք, Աղուանք, Միջագետք Հայոց, Ատրպատական, Խաղտիք, Պոնտոս, Կիլիկիա: Դպրատանց

համար ռամկօրէն լեզուաւ․ աշխատասիրեալ 'ի Հ․ Մանուէլ Վ․ Քաջունւոյ։ Տպագրեալ յամին 1857։ 4,

* ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ ՏԱԽՏԱԿՔ ՀԻՆ․ չորեքտասան տախտակք, այս ինքն Համատարած Մեծ, Չորից մասանց աշխարհի, Երկիր աւետեաց, Հայաստան մեծ, նոյն փոքր ըստ հին աշխարհագրութեան, Ռուսի Հայաստան, Սեաւ ծով կամ Պոնտոս, Օսմանեան տէրութեան կրկին տախտակք, Ռուսաստան, Խրիմ, Մառմառա, Վոսփորն կամ Պօղազ իչի, նոյնն Իտալերէն տառիւք։ Աշխատասիրեալ յայլ և այլ անձանց և տպագրեալ յայլ և այլ ամս։

ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ ՏԱԽՏԱԿՔ ՆՈՐ․ տես Ատլաս աշխարհացոյց պատկերաց։

ԱՊԱՑՈՅՑ ԿՐՕՆԻՑ․ ուղղափառ կրօնի ճշմարտութեան վերայ հարկաւոր ծանօթութիւնք, ռամկօրէն լեզուաւ տղայոց համար։ Տպագրեալ յամին 1851։ 1,25

ԱՌԱՋՆՈՐԴ ԵՐԿՆԻՑ․ բարոյական գրուած օգտակար, ախտից և առաքինութեանց վերայ։ Թարգմանեալ ռամկօրէն և տպագրեալ երկրորդ անգամ յամին 1856։ 3,

ԱՌԱՔԻՆԻ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ՊԱՏԱՆԻ․ փոքրիկ մատեան յօրինեալ Իտալացի Կեսար Քանդուէ, և թարգմանեալ ռամկօրէն լեզուաւ, որ ուսուցանէ պարզ ոճով պատանեաց իրենց պարտքերը, և առաքինութիւնը դիւրին և սիրելի կ'ընէ։ Տպագրեալ յամին 1861։ 2

ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՑ ԵՒ ՄՈԼՈՒԹԵԱՆՑ․ բարոյական գրուած երկու հատոր, Լատիներէնէ թարգմանեալ 'ի Յակովբայ ումեմնէ, որ խօսի եօթն գլխաւոր առաքինութեանց և եօթն գլխաւոր մոլութեանց վերայ։ տպագրեալ յամի 1721․ և երկրորդ անգամ 'ի 1772։ 12,

ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ․ փոքրիկ տետր, առողջութիւնը անվնաս պահելու գլխաւոր նիւթոց վերայ, ռամկօրէն լեզուաւ։ Տպագրեալ առաջին անգամ 1838 ին, և երկրորդ անգամ յամին 1850։ 0,50

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՏԵՍԱԿԱՆ․ որ ուսուցանէ և բացատրէ զխորհուրդս և զամենայն կարևորագոյն

խնդրիս հաւատոյ և հաստատէ վկայութեամբ սուրբ գրոց և սրբոց Հարց, մանաւանդ ազգայնոց. յօրինեալ 'ի պէտս եկեղեցական դպրոցաց 'ի Հ. Եդուարդ Վ. Հիւրմիւզեան Արքեպիսկոպոսէ Շիրակայ, և տպագրեալ յերկուս հատորս յամի 1863: 15,

— ԲԱՐՈՅԱԿԱՆ. որ ուսուցանէ թէ ինչ է մեղքը և անոր տեսակներն ու աստիճանները, և աւանդէ ինչ որ կարևոր է գիտնալ խոստովանահարց: Աշխատասիրութիւն նորին Հ. Եդուարդայ Հիւրմիւզեան Արքեպիսկոպոսի Շիրակայ, թարգմանաբար համառօտելով Ալփոնսոսի Լիգուորեայ բարոյականը. տպագրեալ յերկուս հատորս յամի 1865: 15,

* ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ՄԽԻԹԱՐԱՅ ԱԲԲԱՀՕՐ. գործ նախնեաց հինգերորդ դարու ոսկեղէն շարադրութեամբ սրբոյն Սահակայ և Մեսրոպայ և նոցուն աշակերտաց, որոյ մէջ պարունակի ամբողջ հին և նոր կտակարանը: Աշխատասիրեալ 'ի Մխիթարայ աբբայէ, բաղդատութեամբ այլ և այլ գրչագրաց. և տպագրեալ պատկերազարդ՝ մի մեծ հատոր, յամին 1733–35:

** ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ՄԵԾԱԴԻՐ ԵՒ ՄԻԱՀԱՏՈՐ. նոյն վերոյիշեալ գործ նախնեաց, աշխատասիրեալ 'ի Հ. Յովհաննէս Վ. Զօհրապեան, բաղդատութեամբ այլ և այլ նոր գրչագրաց և յունականին, և զտարբերութիւնս գրչագրաց եդեալ 'ի ներքոյ իւրաքանչիւր երեսաց: Տպագրեալ յամին 1805:

— Նոյնն քառահատոր: 18,

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ նոր և մեծադիր, նոյն վերոյիշեալ գործ նախնեաց, բաղդատութեամբ հաւատարմագոյն գրչագրաց և յունականին, գեղեցիկ տպագրութեամբ, 'ի բաց թողլով զտարբերութիւնս գրչագրաց: Աշխատասիրութիւն Հ. Արսէն Վ. Բագրատունւոյ: Տպագրեալ յամին 1862: 28,

— Նոյնն պատկերազարդ: 40,

ԱՍՏՈՒԱԾԱՍԷՐ. Սրբոյն Փրանչիսկոսի Սալեզացւոյ ընտիր գրուածքը հոգևոր կենաց կատարելութեան համար: Թարգմանեալ յաշխարհաբար 'ի Հ. Եդուարդայ Վ. Հիւրմիւզեան Արքեպիսկոպոսէ Շի-

բակայ և տպագրեալ յամի 1864։ 3,50

ԱՏԼԱՍ ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ ՊԱՏԿԵՐԱՑ. տասն տախտակք փառաւոր փորագրութեամբ, որք են Տիեզերագրութիւն, Համատարած, Ասիա, Եւրոպա, Ափրիկէ, Ամերիկա հիւսիսային և Ամերիկա հարաւային, Ովկիանիա, Հայաստան և Օսմանեան պետութիւն։ Տպագրեալ 'ի խնդրոյ և արդեամբք Յովհաննու ամիրայի Տատեան յամին 1849։ Գին կազմեալ տախտակաց։ 35,

— Իւրաքանչիւր տախտակի 3,50

— Նոյն ներածութեամբ. որ է համառօտ աշխարհագրութիւն ուսումնական, բնական և քաղաքական, ռամկօրէն լեզուաւ։ Տպագ. 1849։ 40,

— Միայն ներածութիւն 5,50

ԱՏԼԱՍ ՓՈՔՐԱԳԻՐ. տասներկու տախտակք, որք են Համատարած, Աշխարհագրութիւն մակարդակ, Աշխարհագրութիւն ծանօթ առ Նախնեօք, Եւրոպա, Ասիա, Ափրիկէ, Ամերիկա հիւսիսային, Ամերիկա հարաւային, Ովկիանիա, Գաղղիա բաժանեալ 'ի նահանգս, Հայաստան ըստ Նախնի աշխարհագրաց, Մասն Ասիոյ ըստ գրոց սրբոց և ըստ Նախնի աշխարհագրաց. Տպագրեալ յամին 1862։ 15,

ԱՐՀԵՍՏ ԱՍՏՈՒԱԾՍԻՐՈՒԹԵԱՆ. բարոյական գրուած ոտանաւոր. 'ի Հ. Մանուէլէ Վ. Ջախջախեան։ Տպագրեալ յամին 1818։ 3,75

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԼԱՍՏԻՎԵՐՏՑԻ. գործ նախնեաց ընտիր շարագրութեամբ, և է ժամանակակից պատմութիւն ազգային 989 Թուականէն մինչև 1071 Թուական. և խօսի նոյն ժամանակի Բագրատունի Թագաւորաց և Անի քաղաքին աւերմանց վերայ ողբական ոճով։ Տպագրեալ յամին 1844։ 3,75

** ԱՐՈՒԵՍՏԱԲԱՆՈՒԹԻՒՆ. համառօտ գրուած ռամկօրէն լեզուաւ, զանազան արուեստական պատրաստութեանց և բաղադրութեանց վերայ 'ի Հ. Մեսրոպ Վ. Ալաչըաքեան։ Տպագրեալ յամին 1850։

ԱՐՈՒԵՍՏԱԳՐՈՒԹԻՒՆ. հայերէն և եւրոպական գրի օրինակներ 'ի Հ. Պետրոս Վ. Մինասեան։ Տպա-

գրեալ յամին 1832 : 3,

— Նոյն Խուլերէն . Փուլէթթի խօսակցելէն յօրինեալ, եւրոպական ընտիր գրութեանց համար : Տպագրեալ յամին 1838 :

ԱՐՈՒԵՍՏ ՈՒՂԻՂ ԽՈՐՀԵԼՈՅ ԵՒ ԲԱՐՒՈՔ ԿԵԼՈՅ . համառօտ գրուած տրամաբանական սկզբանց և բարոյականի վերայ . 'ի Հ . Արսէն Վ . Բագրատունւոյ : Տպագրեալ յամին 1857 : 1,50

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՆԴ ԿՏԱԿԱՐԱՆԻ . գործ Նախնեաց, որոյ մէջ պարունակին չորս աւետարանիչք, գործք առաքելոց, չորեքտասան թուղթք Պօղոսի, և կաթողիկեայք հանդերձ Յայտնութեամբ Յովհաննու : Տպագրեալ զանազան անգամ, և վերջին անգամ 1864 : 3,25

— Նոյն ընդ խորհրդատետրի : 6,50

ԱՒԵՏԱՐԱՆ ՏՆԱՏԵՍԱԼ . առանց կտակարանի : Տպագրեալ առաջին անգամ յամին 1849 : 3,50

## Բ

ԲԱԶՄԱՎԷՊ . օրագիր ռամկօրէն լեզուաւ . ազգային, բանասիրական, ուսումնական և տնտեսական նիւթոց վերայ . ամիսը երկու տետր կ'ելնէ, տարին 24 տետր . և սկսած է 1843 տարին և շարունակէ մինչև ցայժմ : Տարեկան գինը : 10,

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ԱՐՈՒԵՍՏ . համառօտ բանաստեղծութիւն հարցմամբ պատասխանեօք, դպրատանց տղայոց համար . աշխատասիրեալ 'ի Հ . Եդուարդայ Վ . Հիւրմիւզեան : Տպ . յամին 1839 : 2,50 , 4

* ԲԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ . կրթութիւն չորս բարոյական առաքինութեանց վերայ, ոտանաւոր, 'ի Հ . Մկրտիչ Վ . Աւգերեան : Տպագրեալ յամին 1812 : 1,75 · 3

* ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅԿԱԶԵԱՆ . երկու հատոր բառգիրք հայերէն լեզուի . առաջին հատորն է միայն գրաբարէ յաշխարհաբար : Աշխատասիրեալ 'ի Մխիթարայ Աբբայէ և նորա աշակերտներէն . և տպագրեալ յամին 1749 :

Երկրորդ հատորը բաժնուած է երեք մաս . Նախ

մնացորդ առաջին հատորոյ . երկրորդ սուրբ գրոց և արտաքին մատենագրաց յատուկ անուանց ։ 8, 50

Երրորդ բառգիրք աշխարհաբարէ 'ի գրաբար ։ Տպագրեալ յամին 1769 ։ 12,

ԲԱՌԳԻՐՔ ՀԱՅԿԱԶԵԱՆ . երկու հատոր ընդարձակ բառգիրք հայերէն լեզուի, ճոխ բացատրութեամբ և մեկնութեամբ . շատ բառերու առջև դրուած է յունարէն և լատիներէն, և իրենց արմատը ։ Աշխատասիրութիւն մեծ և կարևոր՝ երից Վարդապետաց Հ. Գաբրիէլի Աւետիքեան, Հ. Խաչատրոյ Սիւրմէլեան, և Հ. Մկրտչի Աւգերեան ։ Տպագ. յամին 1836–37 ։ 110,

ԲԱՌԳԻՐՔ ՀԱՄԱՌՕՏ ԿԱՄ ԱՌՁԵՌՆ . լիակատար և համառօտ բառգիրք հայկազեան լեզուի, գրաբարէ յաշխարհաբար և տաճկերէն, որոյ մէջ կը գտնուին հայկազեան բառգրքին ամէն բառերը, հանդերձ յաւելուածով ։ Աշխատասիրեալ 'ի Հ. Մկրտիչ Վ. Աւգերեան ։ Տպագրեալ յամին 1846 ։ 10,

— Երկրորդ անգամ տպագրեալ նոր յաւելուածովք՝ յամի 1865 ։ 10, 50

* ԲԱՌԳԻՐՔ ՅԱՇԽԱՐՀԱԲԱՐԷ Ի ԳՐԱԲԱՐ . տես Բառարան Հայկազեան ։

ԲԱՌԳԻՐՔ ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒԱՆՑ . տես Բառարան Հայկազեան ։

* ԲԱՌԳԻՐՔ ԳԱՂՂԻԱՐԷՆ . երկու մեծ հատոր . առաջին հատորն է Գաղղիարէնէ 'ի Հայերէն և Տաճկերէն ։ Տպագրեալ յամին 1811 . և երկրորդ անգամ յամին 1840 ։ 18,

Երկրորդ հատորն է Հայերէնէ Գաղղիարէն . տպագրեալ յամին 1817 ։ Երկուքն ալ է աշխատասիրութիւն Հ. Յարութիւն Վ. Աւգերեան ։

** ԲԱՌԳԻՐՔ ՅԻՏԱԼԵՐԷՆԷ Ի ՀԱՅ ԵՒ ՏԱՃԻԿ . ընդարձակ բառգիրք Իտալերէն, աշխատասիրեալ 'ի Հ. Մանուէլ Վ. Ջախջախեան ։ Տպագրեալ յամին 1804 ։

— Նոյնն համառօտ, նորին աշխատասիրութիւն ։ Տպագրեալ յամին 1822 . 12,

ԲԱՌԳԻՐՔ Ի ՀԱՅԵՐԷՆԷ ՅԻՏԱԼԵՐԷՆ . ընդարձակ և ընտիր բառգիրք, որ կրնայ ծառայել նաև հայերէն

լեզուի ։ Աշխատասիրեալ 'ի Հ. Մանուէլ Վ. Ջախ- ջախեան, և տպագրեալ յամին 1837 ։ 40,

ԲԱՌԳԻՐՔ ԱՆԳՂԻԱՐԷՆ. ընդարձակ երկու հա- տոր. առաջին հատորն անգղիարէնէ 'ի հայ, 1821 ին տպագրեալ. երկրորդ հատորն է հայերէնէ յանգղիա- րէն, տպագրեալ 1825 ։ Աշխատասիրութիւն Հ. Յա- րութիւն Վ. Աւգերեան ։ 40,

— Նոյնն համառօտ երկու հատոր. անգղիարէնէ 'ի հայ, և հայերէնէ յանգղիարէն ։ Աշխատասիրու- թիւն Գեր. Սուքիասայ Վ. Սոմալեան։ Տպագրեալ յամին 1835 ։ 7,

— Նոյնն համառօտ երեք հատոր, այսինքն անգ- ղիարէնէ 'ի հայ, հայերէնէ յանգղիարէն, և տաճկե- րէնէ յանգղիարէն և հայերէն։ Աշխատասիրութիւն նորին Գեր. Սուքիաս Վ. Սոմալեան ։ Տպագրեալ յամին 1843. 11,

ԲԱՐԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ. ամնական մտածութիւնք ռամկօրէն լեզուաւ, 'ի Հ. Մկրտիչ Վ. Աւգերեան ։ Կայ ասոր տաճկերէն թարգմանութիւնն ալ Աւգե- րեան Պետրոս Վարդապետէն ։ Հայերէնը տպագրեալ է յամին 1809 ։ 1,75

ԲԱՐՍՂԻ ՃԱՌՔ ՎԵՑՕՐԵԱՅ. գործ նախնեաց, Թարգմանեալ 'ի յունականէ, և խօսի աշխարհիս վեց- օրեայ ստեղծման վերայ ։ Տպագրեալ յամին 1830 ։ 4,

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ ՇԱՐԱԿԱՆԱՑ. մեկնութիւն շարա- կանին դժուարին մասանց, աստուածաբանական տե- ղեկութեամբք և խորին հմտութեամբ ։ Գործոյն վեր- ջը կայ ճառ 'ի վերայ բնման Հոգւոյն սրբոյ ։ Աշխա- տասիրեալ 'ի Հ. Գաբրիէլ Վ. Աւետիքեան ։ Տպա- գրեալ յամին 1814 ։ 12,

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ ՉԱՓՈՒՑ ԵՒ ԿՇՌՈՑ. Եպիփանու, Շիրակացւոյն և Խորենացւոյն չափուց և կշռոց վե- րայ տեղեկութիւն ։ Նոյնպէս եբրայեցւոց, յունաց, լատինացւոց և գաղղիացւոց չափուց վերայ ։ Աշխա- տասիրեալ 'ի Հ. Յարութիւն Վ. Աւգերեան, և տը- պագրեալ յամին 1821 ։ 3,50

ԲԵԼԻՍԱՐԱՅ ԱՐԿԱԾՔ. Յունաց զօրավարին վէպ-

քը յօրինեալ Ժանլիս գաղղուհւոյ, և Թարգմանութիւն Արքեպիսկոպոսի Եդուարդայ Հիւրմիւզեան։ Տպագրեալ յամի 1859։ 3,25

ԲԺՇԿԱԿԱՆ ՆԻՒԹՔ. զանազան դեղորէք այլ և այլ հիւանդութեանց. աշխատասիրութիւն Յովակիմ բժշկի Օղուլլուխեան։ Տպագրեալ յամին 1806։ 2,75

ԲԺՇԿԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՐԵՍՏԵՆԻ. երկու հատոր. առաջին հատորն է տեսական և գործնական բժշկականութիւն. երկրորդ հատորն է բժշկական բառարան համառօտ, զանազան լեզուաւ և հայերէն գրով։ Աշխատասիրութիւն Միքայէլի Րեստենի բժշկի։ Տպագրեալ առաջին անգամ յամին 1822. և երկրորդ անգամ 1832։ 12,

ԲՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ. Ճառ Հ. Ղևոնդ Վ. Ալիշան գաղղիերէն։ 1,

ԲՆԱԿԱՆ ՕՐԷՆՔ. խրատական գրուած ռամկօրէն լեզուաւ, հարցմամբ պատասխանեաւ։ Աշխատասիրութիւն Հ. Մեսրոպ Վ. Աղաչրաքեան, և տպագրեալ յամին 1819։ 2,50

ԲՈՐԱՆԷ. գրուած Հայկայ, Թարգմանեալ ՚ի չափս խաղական։ 0,25

ԲՈՒԶԱՆԴ. տես Փաւստոս։

* ԲՈՒՐԱՍՏԱՆ ԱՂՕԹԻՑ. աղօթագիրք աշխատասիրեալ ՚ի Սահփաննոս Վ. Լեհացւոյ, որոյ մէջ կան ամէն կարևոր աղօթքներ։ Տպագրեալ ՚ի վանս սրբոյն Ղազարու յամի 1741։

ԲՈՒՐԱՍՏԱՆՔ ՎՐՈՒՐԻ. ընտիր բանաստեղծական գրուած ոտանաւոր, ծաղկանց և բուսոց վերայ։ Աշխատասիրութիւն արքեպիսկոպոսի Եդուարդայ Հիւրմիւզեան. տպագրեալ յամին 1851։ 2,50

ԲՈՒՐՎԱՌ ԱՂՕԹԻՑ ՄԵԾ. գիրք հաւաքածոյ կարևոր աղօթից. տպագրեալ առաջին անգամ 1801, և երրորդ անգամ 1812։ 2,50

ԲՈՒՐՎԱՌ ԱՂՕԹԻՑ ՓՈՔՐ. վերի աղօթագրքին համառօտութիւնն է. տպագրեալ նախ յամին 1801 և ապա այլ և այլ անգամ։ 2,25

## Գ.

ԳԱՆՁԱՐԱՆ ՇՆՈՐՀԱՑ. երկու գիրք բաժնած է. առաջին գրոց մէջ կայ Ողջ լեր Թագուհի աղօթքին մեկնութիւնը. երկրորդ գրոց մէջ կը խօսի սուրբ Աստուածածնի առաքինութեանց և տօնից վերայ: Թարգմանեալ յիտալերէնէ 'ի ձեռն Հ. Յովսէփ Վ. Պաղտասարեան, և տպագրեալ յամին 1812: 4,50

ԳԵՆՈՎԱՓԷ. վիպասանութիւն Բրիտանացի Գենովաֆէ դքսուհւոյն վերայ. Թարգմանաբար և ոտանաւոր յօրինեալ ռամկօրէն լեզուաւ 'ի Հ. Վրթանէս Վ. Պուտուրեան: Տպագրեալ առաջին անգամ 1850, և երկրորդ անգամ 1858: 4,50

ԳԻՇԵՐՔ ԵՈՒՆԿԻ. է ընտիր բանաստեղծական գրուած Եունկ անգղիացւոյ, որ է ստորագրութիւն մարդոյս կենաց և Թշուառութեանցը: Թարգմանութիւն 'ի տաճկերէն 'ի ձեռն Պարոն Յովհաննու Երեմեան. տպագրեալ առաջին անգամ յամին 1819, երրորդ անգամ յամին 1858: 5,75

* * ԳԻՍԱԽՈՐ ԱՍՏԵՂՔ. փոքրիկ տետր մի, որ խօսի գիսաւոր աստեղաց վերայ: Աշխատասիրեալ 'ի Հ. Գրիգոր Վ. Գասպարաճեան: Տպագրեալ յամին 1811:

ԳՈԹՈՂԻԱ. Յովհաննու Ռասինի Գաղղիացւոյ հռչակաւոր քերդողին գեղեցիկ և ընտիր մէկ ողբերգութիւնը Աստուածաշունչին Թագաւորութեանց գրոց մէջ պատմած Գոթողիայի մահուանը կամ Յովասայ Թագաւորելոյն վրայ: Թարգմանեալ հայկական չափաբանութեամբ 'ի Հ. Գէորգայ Վ. Հիւրմիւզեան Արքեպիսկոպոսէ Սիւնեաց և տպագրեալ յամի 1864: 1,50

ԳՈՐԾՈՑ. Նոր կտակարան առանց աւետարանի: Տպագրեալ վերջին անգամ յամի 1864: 2,25

ԳՐԱՀԱՇԻՒ. որ է Ալճէպրա, բարձրագոյն դասուց համար: Աշխատասիրութիւն Հ. Հմայեակ Վ. Պալիկեան. տպագրեալ յամին 1861: 3,50

ԳՐԻԳՈՐԻ ՏՂԱՅ ԿՈՉԵՑԵԼՈՅ ԵՒ ԼԱՄԲՐՈՆԱՑԻՈՅ ԹՈՒՂԹՔ. գործ նախնեաց երկոտասաներորդ դարու.

և են քանի մի նամակներ, գրուած այլ և այլ անձանց։ Լամբրոնացւոյ նամակներէն եւս գրուած են իր երկու հրաշալի ներբողները Համբարձման և Հոգեգալստեան։ Այս նամակները Ներսեսի Շնորհալւոյ նամակաց հետ միասին տպագրած են յամին 1838։ 5,50

ԳՐԻԳՈՐԻ ՄԵԾԻ ՀՈՎՈՒԱԿԱՆՔ· խրատական բանք 'ի պէտս եպիսկոպոսացու անձանց և առաջնորդաց եկեղեցւոյ· գործ ընտիր և կարևոր զոր թարգմանեաց 'ի լատինէ Հ· Մկրտիչ աթոռակալ Վ· Աւգերեան։ Տպագրեալ յամին 1846։ 3,

## Դ

ԴԱՀՄԱԶ ԳՈՒԼՈՒ ԽԱՆ· համառօտ պատմութիւն Դահմազ Գուլու խանին, տաճկերէն գրուած թամպուրի Յարութենէ· և տպագրեալ յամին 1800։ 0,50

ԴԱՐԱՊԱՏՈՒՄ· ութ հատոր պատմութիւն ռամկօրէն լեզուաւ, որ կը սկսի 1750 էն և կը հասնի մինչև 1800, և կը պատմէ նոյնչափ ժամանակի մէջ Եւրոպայի ամէն տէրութեանց մէջ պատահած դիպուածները։ Վերջի երկու հատորոց մէջ կը պատմէ նոյն ժամանակները գիտութեանց և արուեստից մէջ ծաղկող երևելի անձանց վարքը։ Գործոյս հեղինակն է Հ· Ղուկաս Վ· Ինճիճեան։ Տպագրեալ յամին 1814։ 28,50

ԴԱՒԻԹ ԱՆՅԱՂԹ· տես Կորիւն։

ԴԵՂ ԿՆՆԱՑ· բարոյական գրուած ռամկօրէն, ախտից դէմ և առաջնորդ առաքինութեան։ Աշխատասիրութիւն Հ· Մկրտիչ Վ· Աւգերեան։ Տպագրեալ յամին 1810, և չորրորդ անգամ 1858։ 3,

** ԴԺՈԽՔ ԲԱՑԵԱԼ· նկարագրութիւն դժոխքին տանջանաց, հանդերձ մտածականներով։ Թարգմանեալ յաշակերտաց Մխիթարայ Աբբայի, և տպագրեալ յամին 1753։

ԴԻՑԱԲԱՆՈՒԹԻՒՆ· դպրոցաց համար հարցմամբ պատասխանեաւ, որ պատմէ դից և դիւցազանց վարքը։ Աշխատասիրութիւն Հ· Եդուարդ Վ· Հիւրմիւզեան։ Տպագրեալ յամին 1840։ 2,

ԴՈՒՌՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ. համառօտ քերականութիւն հայերէն լեզուի հարցմամբ պատասխանեաւ, և ռամկօրէն բացատրութեամբ, նորուս տղայոց համար։ Աշխատասիրութիւն Հ. Եդուարդ Վ. Հիւրմիւզեան։ Առաջին տպագրութիւնը եղած է յամին 1832, և երրորդ տպագրութիւնը 1849։ 2,

ԴՊՐՈՑ ԲԱՐՈՒՑ. բարոյական գրուած օգտակար, պատմական դէպքերով զարդարուած, և խօսի կրօնի, բարոյականի, կրթութեան և ընկերութեան հարկաւոր սկզբանց վերայ։ Գործոյն վերջը գրուած է համառօտ նկարագիր մը առաքինի և զգօն անձին, և այս նկարագրին կայ առանձին թարգմանութիւնը գրաբար, տպագրեալ յամին 1836, մականուամբ կենդանագիր զգաստ և զգօն անձին։ Գործոյս հեղինակն է Պլանշար գաղղիացի, զոր թարգմանեց ազատաբար և վերածմամբ 'ի ռամկօրէն լեզու Հ. Մանուէլ Վ. Քաջունի։ Տպագրեալ յամին 1860։ 6,

ԴՊՐՈՒԹԵԱՆ ԳԻՐՔ. փոքրիկ գրքոյկ, ձայնաւոր պատարագի մէջ դպրաց գործածութեան համար։ Կան մէջը տաղք, մեղեդիք, ճաշու և հանգստեան շարականք 'ի նախնեաց յօրինեալք։ Տպագրեալ յամին 1834. և երրորդ անգամ 'ի 1863։ 2,

ԴՊՐՈՒԹԻՒՆ ՆԱՄԱԿԱՑ. կ'ուսուցանէ ամեն տեսակ նամակագրութիւն հանդերձ գրաբար և աշխարհաբար նամակի օրինակներով։ Աշխատասիրեալ 'ի Հ. Եղիա Վ. Թոմաճանեան, և տպագրեալ 1805։ 3,

* ԴԻՄԱՌՆՈՒԹԻՒՆ ՉՈՐԻՑ ՎԵՐՋՆՈՑ. քերթուած ոտանաւոր, մարդոյս չորից վերջնոց վերայ, որք են մահ, դատաստան, դժոխք և արքայութիւն։ Աշխատասիրեալ 'ի Հ. Մկրտիչ Վ. Աւգերեան գրաբար և աշխարհաբար, և տպագրեալ 1810։

* ԴԻՏԱԿ ԲԻՒԶԱՆԴԵԱՆ. օրագիր ռամկօրէն լեզուաւ, սկսեալ 1812 էն կը հասնի մինչև 1817 տարին։ Կան մէջը ժամանակակից քաղաքական լուրեր, հանդերձ բանասիրական, արհեստական և բնական գիտելեօք։

* * ԴՐԱԽՏ ՀՈԳԻՈՑ. հոգևոր և խրատական գըր-

քոյ. Թարգմանեալ 'ի Մխիթարայ աբբայէ, և տպա-
գրեալ յամին 1724:

## Ե

ԵԶՆԻԿ. ընտիր գործ նախնեաց հինգերորդ դարու,
մի փոքրիկ հատոր, յօրինեալ յԵզնկայ Կողբացւոյ.
որ է եղծ աղանդոց հեթանոսաց, Պարսից, Իմաստնոց
Յունաց, Մարկիոնոսի, և խրատական բանք: Տպա-
գրեալ յամին 1824: 3,

ԵԶՈՎԲՈՍ. յոյն երևելի առակախօս. մատեան
պատկերազարդ, զոր Թարգմանեաց 'ի գաղղիականէ
Հ. Մինաս Վ. Բժշկեան ռամկօրէն լեզուաւ, և կայ
իւրաքանչիւր առակին տակ համառօտ խրատական ո-
տանաւոր մը գրաբար: Առաջին տպագրութիւնը ե-
ղած է յամին 1818, և վերջինն 1860ին: 5,

ԵՂԻՇԷԻ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ. ընտիր գործ նախ-
նեաց հինգերորդ դարու, մի հատոր մեծադիր, որոյ մէջ
բովանդակի Վարդանանց պատերազմը, և զանազան
խրատական և ճառական գրուածներ և կանոններ:
Առաջին տպագրութիւնը եղած է յամին 1838, եր-
կրորդ տպագրութիւնը հանդերձ յաւելուածով յա-
մին 1859: 6,50

— Նորին Վարդանանց պատերազմին պատմու-
թիւնը միայն, մի փոքրիկ հատոր, ոսկեղէն շարագրու-
թեամբ: Տպագրեալ նախ յամի 1828. և վերջին ան-
գամ յամին 1864: 3,

ԵՈՒՆԿ. տես Գիշերք Եւնկի:

ԵՊԻԿՏԵՏՈՍ. խրատական բանք Եպիկտետոս փի-
լիսոփայի, Թարգմանեալ տաճկերէն լեզուաւ, մի
փոքրիկ հատոր, և տպագրեալ յամին 1837: 0,60

ԵՌԱՆԿԻՒՆԱՉԱՓՈՒԹԻՒՆ. երկու բաժնած, մա-
կարդակ և գնդական եռանկիւնաչափութիւն, տեսա-
կան և գործնական կերպով. կ'ուսուցանէ չափել լե-
րանց, աշտարակաց և աստեղաց հեռաւորութիւնը և
բարձրութիւնը: Ունի գործոյն վերջը նշանակաց ա-
ղիւսակ մը, այս գիտութեան համար: Աշխատասի-

րեալ 'ի Հ. Սահակ Վ. Գրոնեան, և տպ. 1810: 3,50

ԵՐԿՐԱՉԱՓՈՒԹԻՒՆ ՄԵԾ. երեք գիրք բաժնած, այս ինքն երկայնաչափութիւն, մակարդակաչափութիւն և հաստատաչափութիւն, տեսական և գործնական կերպով, հանդերձ բազում ձևերով: Աշխատասիրեալ 'ի Հ. Սահակ Վ. Գրոնեան, և տպ. 1794: 4,50

— Նոյնն գործնական. գործնական տեղեկութիւն երկրաչափութեան վերայ. յօրինեալ ռամկօրէն լեզուաւ 'ի Հ. Իգնատիոս Վ. Փափազեան, և տպագրեալ յամին 1817: 3,25

— Նոյնն համառօտ. ռամկօրէն լեզուաւ և պարզ ոճով, դպրոցաց համար. յօրինեալ 'ի Հ. Աբրահամ Վ. Ճարեան, և տպագրեալ յամին 1843: 3,

— Նոյնն բարձրագոյն դպրոցաց համար, 'ի Հ. Հմայեակ Վ. Պապիկեան, և տպագ. յամին 1861: 3,50

ԵՒՍԵԲԻՈՍ. քրոնիկոն կամ ժամանակագրական պատմութիւն Եւսեբիոսի Կեսարացւոյ, Թարգմանեալ 'ի նախնեաց հինգերորդ դարու, որոյ յունական բնագիրը ըստ մեծի մասին կորսուած ըլլալուն, Թարգմանեց լատին լեզուով Հ. Մկրտիչ Վ. Աւգերեան, և տպագրեցաւ միահատոր և մեծադիր, երեք լեզուով յամին 1818: Կայ և քառածալ երկհատոր: 31,

ԵՓՐԵՄԻ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ. Թարգմանութիւն նախնեաց հինգերորդ դարու, որ է մեկնութիւն Սուրբ գրոց, այս ինքն ծննդոց, ելից, ղևտացւոց, Թուոց, օրինաց, դատաւորաց, Թագաւորաց, մնացորդաց, մեկնութիւն աւետարանի որ կոչի Համաբարբառ, մեկնութիւն չորեքտասան Թղթոց Պօղոսի, ճառք զանազանք: Չորս հատոր քառածալ, տպ. յամին 1836: 18,

ԵՕԹՆ ԽՈՑԻՑ համառօտ աղօթագիրք տաճկերէն, Աստուածածնի եօթն խոցից վերայ, և ուրիշ քանի մի աղօթք հայերէն լեզուով, տպագ. յամին 1818: 1,75

— Նոյնն յունարէն լեզուով և խալէրէն գրով: Տպ. յամին 1818, և երկրորդ անգամ 1855 ին: 1,75

— Նոյնն խալէրէն:

6491/39

## Զ

ԶԲՕՍԱՐԱՆ ՄԱՆԿԱՆՑ. *զուարճալի և բարոյական պատմութիւններ ռամկօրէն լեզուաւ տղայոց համար, որ կը տպագրի հետզհետէ առանձին հատորներով, սկսեալ 1859 տարւէն. հրատարակուած են մինչև հիմա հինգ հատոր, որք են Ծննդեան խթումն, Խորհրդական բերդ, Մօր մը քաշած վիշտերը, Մագդաղինէ, Զկնորսին հիւղը: Իւրաքանչիւր հատորը զատ զատ գնով կը վաճառուի. տես իւրաքանչիւրին անունը առանձինն, և բովանդակը միանգամայն:* 11,50

ԶԵՆՈԲ ԳԼԱԿ, ԿԱՄ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԱՐՕՆՈՑ. *գործ նախնեաց չորրորդ դարու յօրինեալ 'ի Զենոբայ Գլակայ, որոյ մէջ կը պատմէ Լուսաւորչի Կեսարիա երթալը, և Ղևոնդիոս եպիսկոպոսէն ձեռնադրուիլը, սուրբ Կարապետի նշխարաց փոխադրութիւնը, և Տարօնոյ կողմ եղած քանի մի պատերազմական դէպքեր: Տպագրեալ յամին 1832:* 3,75

** ԶԻ՛ՆՉ Է ԵԿԵՂԵՑԻ. *փոքրիկ տետր մի ռամկօրէն լեզուաւ, որոյ մէջ կը ցուցանէ համառօտիւ եկեղեցւոյ ստորոգելիքը, որ է միութիւն, ընդհանրականութիւն և առաքելականութիւն: Տպ. յամին 1844:*

## Է

ԷՊԷՏԻԼԻԿ ՏԱՑԻՐ ՆԱՍԻՀԱԹԼԷՐ. *փոքրիկ մատեան Ալֆոնսոս Լիգուօրիէն յօրինեալ, և թարգմանեալ տաճկերէն. որ պարունակէ շաբթուն իւրաքանչիւր օրերուն վերայ բարի մտածականներ, և շաբաթական մտածական Յիսուսի չարչարանաց վերայ և զանազան աղօթք և խաչ եօլու: Տպագրեալ երրորդ անգամ յամին 1854:* 2,25

ԷՖԻՄԷՐՏԷՍ. *մշտնջենաւոր շրջան տարեկան գուշակութեանց: Աշխատասիրեալ 'ի Սարգիս արքեպիսկոպոսէ Սառաֆեան, և տպագրեալ յամին 1796:* 2,75

## Ը

ԸՆԴՕՐԻՆԱԿՈՒԹԻՒՆ. է մեծադիր մատեան, որ ուսուցանէ գծագրել որ և իցէ առարկայ. և առանձին հատորով դրուած են ձևոց տախտակներ, կանոնաց գործադրութեան համար: Աշխատասիրեալ 'ի Հ. Իգնատիոս Վ. Փափազեան, և տպ. յամին 1814: 13,50

## Թ

ԹԱՍՍՈՆԻ ԿԱՄ ԱՊԱՑՈՅՑՔ ԿՐՕՆԻՑ. ընտիր գործ Աղեքսանդր Թասսոնի Իտալացւոյն, որոյ մէջ կը դնէ ճոխաբար կրօնից վերաբերեալ ամեն ճշմարտութիւնները, և կը լուծէ ամեն առարկութիւնները: Թարգմանեալ 'ի Հ. Մկրտիչ Վ. Աւգերեան, և տպագրեալ յամին 1844: 13,50

ԹԷՈՓՐԱՍՏԵԱՅ ՆԿԱՐԱԳԻՐՔ. համառօտ և գեղեցիկ կերպով կ'ընէ ախտից կամ մոլութեանց նկարագիրը: Թարգմանեալ 'ի յունէ 'ի ձեռն Հ. Արսէն Վ. Բագրատունւոյ, և տպագրեալ յամին 1830: 1,75

ԹԷՆՀԱՏԻ ՊԻՐ ՔԵԱՄԻԼ ԱՏԱՄ. է առանձնախօսութիւն Եունկ փիլիսոփայի արարածոց և արարչին վերայ: Թարգմանեալ տաճկերէն լեզուաւ 'ի ձեռն Պարոն Յովհաննու Երեմեան, և տպագ. յամին 1816: 2,25

ԹԷՕՊԷՔԵԱՐ ԱՏԱՄ. գործ Սէնեէրի Իտալացւոյ, որ խօսի խոստովանութեան խորհրդոյն վերայ: Թարգմանեալ տաճկերէն լեզուաւ 'ի ձեռն Պարոն Յովհաննու Երեմեան, և տպագրեալ յամին 1827: 2,25

ԹՈՎՄԱՍ ԳԵՄԲԱՑԻ. օգտակար մատեան, չորս գիրք բաժնած, Քրիստոսի նմանող ըլլալու վերայ: Թարգմանեալ 'ի Հ. Վրթանէս Վ. Ասկէրեան. և տպագրեալ առաջին անգամ յամին 1786, և երկրորդ անգամ յամին 1853: 2,50

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՄԵԾ. խօսի ընդարձակ և ճապաղ ոճով Թուաբանական ամէն գործողութեանց վե-

րայ: Յօրինեալ 'ի Հ. Սուքիաս Վ. Աղամալեան, և տպագրեալ յամին 1781: 4,50

— *Նոյն ռամկօրէն լեզուաւ և համառօտ, 'ի Հ. Խաչատուր Վ. Սիւրմէլեան: Տպագրեալ առաջին անգամ յամին 1788, և երկրորդ անգամ յամին 1817: 2,

— *Նոյն ռամկօրէն լեզուաւ և համառօտ հարցմամբ պատասխանեաւ, 'ի Հ. Պետրոս Վ. Մինասեան: Տպագրեալ յամին 1838:

— Նոյն ռամկօրէն լեզուաւ և բաւական ընդարձակ: Տպագրեալ յամին 1853: 3,50

— Նոյն ռամկօրէն լեզուաւ և ընդարձակագոյն 'ի Հ. Մանուէլ Վ. Քաջունւոյ. ա. Համարողութիւն:

— Նոյն ռամկօրէն այլ ընտիր՝ յօրինեալ վասն բարձրագոյն դասու աշակերտաց 'ի Հ. Հմայեակ Վ. Պալեկեան և տպագրեալ յամի 1863:

## Ժ

ԺԱՄԱԳԻՐՔ. է կարգաւորութիւն հասարակաց աղօթից Հայաստանեայց եկեղեցւոյ. արարեալ սրբոյն Սահակայ, Մեսրոպայ, Մանդակունւոյ և Գիւտայ: Տպագրեալ է բազում անգամ. առաջին անգամ տպագրեցաւ յամին 1742, և վերջին անգամ 1860: 2,75

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ. տես Տարերք ժամանակագրութեան:

## Ի

ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ. գործ Նամանուէլի Թեսաւրոսի Իտալացւոյ, որ խօսի ընտիր ոճով մարդկային գլխաւոր առաքինութեանց և մոլութեանց վերայ, զարդարեալ զանազան հին պատմութիւններով և առակներով: Գործոյն վերջը յաւելեալ է ծանօթութիւն հին և մթին բանից հեղինակին: Թարգմանեալ 'ի Հ. Վրթանէս Վ. Ասկէրեան. և տպագրեալ առաջին անգամ յամին 1793, և վերջին անգամ յամին 1853: 4,75

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ. օգտակար գրքոյկ ռամկօրէն լեզուաւ, որ խօսի մարդոյս պարտուց վերայ, զոր ունի առ Աստուած առ ինքն և առ ընկերս իւր։ Յօրինեալ ՚ի Հ. Եղիա Վ. Թոմաճանեան. և տպագրեալ առաջին անգամ յամին 1833, և երկրորդ անգամ յամին 1859։ 3,50

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ՍՈՂՈՄՈՆԻ. Աստուածաշունչ գրոց իմաստութեան հրաշալի գիրքը առանձին տպագրեալ հանդերձ յոյն և լատին բնագրաւ, յամին 1827։ 2,

ԻՐԱՒԱԳԻՏՈՒԹԻՒՆ. ընդարձակ գործ միահատոր, որ խօսի բնական օրինաց, դրաւական, տոհմային և ազգային իրաւանց վերայ։ Յօրինեալ ՚ի Հ. Եփրեմ Վ. Սեթեան, և տպագրեալ յամին 1851։ 10,

## Լ

ԼԱՄԲՐՈՆԱՑԻՈՅ ԱՏԵՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ. զոր խօսեցաւ Տարսոնի տիեզերական ժողովոյն մէջ. և երկու ընտիր ճառք Համբարձման և Հոգեգալստեան։ Տպագրեալ յամին 1787։ 2,

— Նոյնն յետոյ տպագրեցաւ Շնորհալւոյ նամակաց և Գրիգորի Տղայի գործոց հետ. տես Գրիգոր Տղայ։

— Ատենաբանութիւն թարգմանեալ իտալերէն ՚ի Հ. Յարութիւն Վ. Աւգերեան, տպագրեալ հայերէն և իտալերէն յամին 1812։ 3,25

— Նորին, Մեկնութիւն Պատարագի. ընտիր գործ ընդարձակ, յորում մեկնէ զխորհուրդ Պատարագի։ Տպագրեալ յամին 1847։ 7,75

ԼԻԳՈՒՈՐԵԱՅ ՅԱՂԱԳՍ ՍԻՐԵԼՈՅ ԶՅԻՍՈՒՍ. հոգեշահ մատեան թարգմանեալ յիտալերէնէ ՚ի ռամկօրէն լեզու, և տպագրեալ յամին 1853։ 3,

— Նորին, պատրաստութիւն մահու կամ խորհրդածութիւնք ՚ի վերայ յաւիտենական ճշմարտութեանց. հոգեշահ մատեան թարգմանեալ յիտալերէնէ ՚ի ռամկօրէն, և տպագրեալ յամին 1852։ 3,50

ԼՈՐՏ ՊԱՅՐԸՆ. Լորտ Պայրընի և այլոց անգղիացի

քերդողաց ծաղկաքաղ քերդուածք. տպագրեալ հայերէն և անգղիարէն 'ի միասին յամին 1852։ 5,50

— Նորին, Իտալիա, գեղեցիկ քերդուած Իտալիոյ վերայ. տպագրեալ հայերէն և անգղիարէն 'ի միասին յամին 1860։ 3,25

ԼՈՒԴՈՎԻԿՈՍ ԺԶ. պատմութիւն ռամկօրէն լեզուաւ Լուդովիկոս ԺԶ Թագաւորին Գաղղիոյ', և իր ժամանակի խռովութեան, գեղեցիկ ոճով գրուած։ Տպագրեալ յամին 1863։ 5,

## Խ

** ԽԹԱՆ ՋՂՋՄԱՆ. պիտանի խրատներ և մտածականներ խոստովանութեան և ապաշխարութեան վերայ։ Թարգմանեալ 'ի Տէր Պետրոսէ Միւհիւպեան, և տպագրեալ յամին 1727։

ԽՈԿՄՈՒՆՔ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆՔ. ամսօրեայ մտածութիւնք համառօտ և պտղու բանիւք։ Թարգմանեալ 'ի Հ. Վրթանէս Վ. Ասկէրեան, և տպագրեալ յամին 1771։ 1,50

Նոյն տաճկերէն Թարգմանութիւն 'ի Պ. Յովհաննէսէ Երեմեան, որ կոչի Պիր Քրիսթիյան ատամ։ Տպագրեալ յամին 1827։ 2,

ԽՈՍՐՈՎ ՄԵԾ. ողբերգութիւն մեծն Խոսրովայ Հայոց Թագաւորին վերայ, յօրինեալ արձակ շարագրութեամբ 'ի Հ. Պետրոս Վ. Մինասեան։ Տպագրեալ յամին 1845։ 2,

ԽՈՐԵՆԱՑԻՈՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ. գործնախնեաց հինգերորդ դարու, միահատոր և մեծադիր, որոյ մէջ բովանդակի ազգային պատմութիւն 'ի Հայկայ մինչև իր ժամանակը, այս ինքն մինչև սրբոյն Սահակայ և Վռամշապհոյ ժամանակ։ Թուղթ առ Սահակ Արծրունի, Ճառ Հռիփսիմեանց, Վարդավառի, Պիտոյից գիրք, Աշխարհացոյց, այսինքն աշխարհագրութիւն համառօտ Հին Հայաստանի։ Տպագրեալ յամին 1843 դարձեալ յամին 1865։ 11,50

— Նորին պատմութիւն Հայոց, առանձինն տը-

պեալ փոքրադիր առաջին անգամ յամին 1827: 5,50

— Նոյնն իտալերէն Թարգմանութիւն Թոմաղէոյ քաջահմուտ իտալացւոյն: Տպ. յամին 1850: 7,50

— Նոյնն գաղղիերէն Թարգմանութիւն Լը-Վայլեան Ֆլորիվալ գաղղիացւոյ, երկու հատոր, հանդերձ հայերէնիւ: Տպագրեալ յամին 1841: 18,

ԽՈՐՀՈՒՐԴ ԱՍՏՈՒԱԾԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ. անօրինական խորհրդոց վերայ Սուրբ գրոց վկայութեամբ, հանդերձ մեկնաբանութեամբք: Յօրինեալ 'ի Հ. ՄատԹէոս Վ. Եւդոկիացւոյ, և տպ. յամին 1775: 3,25

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԲԵՐԴ. վիպասանութիւն Թարգմանեալ ռամկօրէն լեզուաւ, տղայոց համար: Տպագրեալ յամին 1860. տես Զբօսարան մանկանց: 3,50

ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ ՄԵԾ. որ է պատարագամատոյց վասն սրբոյ Պատարագի: Տպագրեալ յամին 1741, և վերջին անգամ յամին 1823: 4,

— Նոյնն փոքրադիր. տպագրեալ յամին 1809, և վերջին տպագրութիւն 1823: 2,50

— Նոյնն պատկերազարդ, տպ. յամին 1823: 7,50

— Նոյնն հայ իտալ փոքրադիր, Պատարագի խորհրդաւոր պատկերներով զարդարուած: Տպագրեալ առաջին անգամ յամին 1826, և երրորդ անգամ 1854: 4,

— Նոյնն գաղղիարէն Թարգմանեալ, և տպագրեալ յամին 1851: 4,

— Նոյնն անգղիերէն Թարգմանութեամբ տպագրեալ յամին 1863. 4,

ԽՐԱԽՃԱՆ. համառօտ Հայոց պատմութիւն. յօրինեալ 'ի Հ. Միքայէլ Վ. Չամչեան, և տպագրեալ յամին 1811: 5,

ԽՐԱՏ ԿՐՕՆԱՒՈՐԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՆ. պիտանի գրուած կրօնաւորական վիճակի համար. և վերջը կան շաբթուն եօթն աւուրց համար մտածականներ Քրիստոսի տեառն մերոյ եօթն առաքինութեանց վերայ: Թարգմանեալ 'ի Հ. Վրթանէս Վ. Ասկերեան, և տպագրեալ յամին 1779: 2,25

## Ծ

ԾԱՂԻԿ ՎԱՐՈՒՑ· համառօտ պատմութիւն վարուց սրբոց, երկու փոքրիկ հատոր, տօնելեաց և յիշատակելեաց։ Առաջնոյն մէջ գրուած է հայաստանեայց եկեղեցւոյ տօնելի սրբոց վարքը· տպագրեալ յամին 1800։ Երկրորդին մէջ գրուած է Յայսմաւուրաց մէջ յիշատակեալ սրբոց վարքը· տպագրեալ յամին 1803։ Աշխատասիրութիւն Հ· Մկրտիչ Վ· Աւգերեան· որ համառօտութեամբն և ամբողջութեամբն է գովելի յոյժ։ 2,50

ԾԱՌ ԿԵՆԱՑ· մեկնութիւն խորհրդոյ սրբոյ Պատարագի, զարդարեալ հին և նոր կտակարանաց պատկերներով։ Գործ հաւաքածոյ Աթանաս Վարդապետի Տայի Սիմոնեան։ Տպագրեալ յամին 1750։ 1,75

ԾՆՆԴԵԱՆ ԽԹՈՒՄ· վիպասանութիւն Թարգմանեալ ռամկօրէն լեզուաւ, տղայոց համար։ Տպագ· յամին 1859։ Տես Զբօսարան մանկանց։ 1,75

## Կ

ԿԱԼԿԱԹԱՅԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ· ստորագրութիւն Կալկաթա քաղաքի և ուրիշ քանի մի քաղաքաց արեւելեան Հնդկաց, զոր ըրաւ իր Ճանապարհորդութեան ժամանակ Պարոն Պօղոս Ղազարովիչ։ Տպագրեալ յամին 1832։ 4,50

ԿԱՆՈՆ ԿԵՆԱՑ· ընտիր հոգեշահ մատեան, որ երեք գլխաւոր մասն բաժնած է, այս ինքն պարտ առ Աստուած, առ ընկերն և առ անձինս մեր։ Թարգմանեալ յիտալերէնէ 'ի ձեռն Հ· Մկրտչի Վ· Աւգերեան, և տպագրեալ յամին 1835։ 2,50

ԿԱՐՈԼՈՍ· բարոյական և օգտակար գրքոյկ, վիպասանական ոճով գրուած Կարոլոս անուամբ, որ է գործ իտալացի Քանդուի։ Թարգմանեալ ռամկօրէն լեզուաւ 'ի Հ· Սամուէլ Վ· Խսկէնտերեան, և տպագրեալ յամին 1843։ 2,

** ԿԵՐԱԿՈՒՐ ՔԱՀԱՆԱՅԻՑ. *խրատք և ազդարարութիւնք քահանայից, թէ ինչպէս պէտք է կատարել աստուածային պաշտամունքը: Թարգմանեալ Տէր Աստուածատուր Ջուղայեցիէն: Անոր հետ կազմած է և փոքրիկ գրքոյկ մը որ կոչի Արհեստ փրկութեան Թարգմանեալ 'ի Մխիթարայ աբբայէ, և տպագրեալ յամին* 1760:

ԿԻԿԵՐՈՆԻ ՅԱՂԱԳՍ ՊԱՏՃԱՌԻՑ. *ընտիր գործ Կիկերոնի, լաւին երևելի մատենագրի. զոր գրէ իր որդւոյն Մարկոսին համար, ուսուցանելով թէ ինչ է պատշաճ և վայելուչ առ 'ի գործել: Թարգմանեալ 'ի Հ. Մկրտիչ Վ. Աւգերեան, և տպ. յամին* 1845: 3,25

ԿԻՐԱԿՈՍ ՊԱՏՄԻՉ. *մատենագրութիւն ազգային Կիրակոսի գանձակեցւոյ ԺԳ դարուն, որ կը պատմէ Տրդատայ ժամանակէն մինչև ցթագաւորութիւն Ռուբինեանց 'ի Կիլիկիա և մինչև ցՀեթում Ա. նաև Սկիւթացւոց կամ Թաթարաց շատ գործքերը կը պատմէ իբրև ականատես. տպագրեալ կարևոր ծանօթութեամբք յամի* 1865: 5,

ԿԻՒԼՋԱՐԻ. *համառօտ պատմութիւն Հայոց, տաճկերէն լեզուաւ, յօրինեալ 'ի Հ. Միքայէլ Վ. Չամչեան. և տպագրեալ առաջին անգամ* 1841 *ին, և երկրորդ անգամ* 1850 *ին, և նպատակն է հայերէն լեզուն չգիտցող ազգայնոց, ուսուցանել ազգային պատմութիւնը: Կայ նաև նոյն գործոյն հայերէնը խրախճան անուամբ:* 5,25

** ԿՇԻՌ ԺԱՄԱՆԱԿԻ. *հոգեշահ մատեան, որոյ մէջ բաղդատութիւն կ'ըլլայ ժամանակաւոր բարեաց՝ յաւիտենական բարեաց հետ: Թարգմանեալ 'ի Հ. Զաքարիա Վ. Ալէքսանեան, և տպագրեալ յամին* 1750:

ԿՈՐԻՒՆ, ՄԱՄԲՐԷ ԵՒ ԴԱՒԻԹ ԱՆՅԱՂԹ. *երեք գործ նախնեաց հինգերորդ դարու: Կորեանն է պատմութիւն սրբոյն Մեսրոպայ, Մամբրէի երկու ճառք, որ են Ղազարու յարութեան, և Գալստեան Քրիստոսի յԵրուսաղէմ, գեղեցիկ ոճով. իսկ Դաւթի անյաղթ փիլիսոփային իմաստասիրական գրուած մթին և անիմանալի ոճով, և խօսի իմաստասիրութեան սահմանաց*

վերայ, Ներածութիւն Պորփիւրի, Վերլուծութիւն Պորփիւրի, Ստորոգութիւնք Արիստոտէլի և այլն, և ճառ մի ընտիր 'ի սուրբ Խաչն Քրիստոսի: Տպագրեալ յամին 1833: 11,50

ԿՏԱԿԱՐԱՆ ՆՈՐ. տես Աւետարան ընդ կտակարանի:

Կ

ԿՐԹՈՒԹԻՒՆ ԱՂՕԹԻՑ. ամէօրեայ մտածականք և խրատք այլ և այլ՝ արձակ շարադրութեամբ, և գովեստ առ սուրբ Աստուածածին ոտանաւոր չափմամբ, և կարգ լիակատար ներողութեան հոգեվարաց: Աշխատասիրութիւն Մխիթար Աբբահօր. Տպագրեալ երկրորդ անգամ յամին 1772: 2,

ԿՐԹՈՒԹԻՒՆ ԽՈՍՏՈՎԱՆԱՀԱՐՑ, ԿԱՄ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳ. խօսի ապաշխարութեան խորհուրդը բարւոք մատակարարելու վերայ, հարցմամբ պատասխանեաւ: Թարգմանեալ իտալական լեզուէ 'ի ձեռն Հ. Ղուկաս Վ. Օղուլլուխեան, և տպ. յամին 1821: 3,25

ԿՐԿՆԱՏՈՒՄԱՐ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ. մեծադիր մատեան, որ ուսուցանէ վաճառականութեան հարկաւոր գիտելիքները և տետրակ բռնելու կերպը: Աշխատասիրութիւն Հ. Իգնատիոս Վ. Փափազեան. տպագրեալ յամին 1824: 18,

ԿՕԼՁՄԻԹ. համառօտ պատմութիւն Հռովմայեցւոց տաճկերէն լեզուաւ. տպագրեալ յամին 1830: 3,25

## Հ

ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏԱՍԽԱՆԻՔ ԸՆԴԴԷՄ ԱՆԿՐՕՆԻՑ. համառօտ և ընտանեկան պատասխանիք կրօնից դէմ շատ անգամ լսուած առարկութեանց: Օգտակար գրուած Տէր Սէկիւռ գաղղիացի քահանայի. Թարգմանեալ ռամկօրէն լեզուաւ 'ի Հ. Օքսէնտ Վ. Գուրգէնեան, և տպագրեալ յամին 1855: 2,75

ՀԱՄԱՐՈՂՈՒԹԻՒՆ. կատարեալ Թուաբանութիւն երկու մասն բաժնած, համառօտ և ընդարձակ ռամկօրէն լեզուաւ. առաջին մասին մէջ խօսի համարողական էական գործողութեանց վերայ համառօտ կեր-

պով, Նորատիք մանկանց համար · Երկրորդ մասին մէջ խօսի համարողական ամէն տեսակ գործողութեանց վրայ ընդարձակ կերպով և օրինակներով, չափահաս պատանեաց համար: Գործոյն վերջը կայ համառօտ բառգիրք համարողական բառերու հայ · գաղղ · և իտ ։ Աշխատասիրութիւն Հ · Մանուէլ Վ · Քաջունւոյ, և տպագրեալ առաջին անգամ յամին 1854, և երկրորդ անգամ 1860 : 4,75

ՀԱՅԿ ԴԻՒՑԱԶՆ · դիւցազներգութիւն Հայկայ քան դրուագ կամ դլուխ բաժնուած, որոյ մէջ կ'երգէ քերդողը Հայկայ Բելայ դէմ ըրած պատերազմը, և աստուածպաշտութեան անաստուածութեան հետ ունեցած հակառակութիւնը: Ազգասիրական գործ Հ · Արսէն Վ · Բագրատունւոյ, առաջին դիւցազներգակ բանաստեղծի ազգիս, ընտիր հայկաբանութեամբ և հայկական չափով տաղաչափեալ, և պատկերազարդ, հանդերձ կենդանագրաւ հեղինակին: Տպագրեալ յամին 1858 : 13,

ՀԱՅՈՑ ԵՐԳՔ ՌԱՄԿԱԿԱՆՔ · հայերէն և անգլիերէն · փոքրիկ մատեան, քանի մի ազգային ռամկական երգերը անգլիերէն թարգմանած, և տպագրած բնագրաւ հանդերձ յամին 1852 : 3,25

ՀԱՆԳԱՆԱԿ ՀԱՒԱՏՈՅ · բացատրութիւն Հաւատամքի՝ երկու լեզուաւ, հայ ռամկօրէն և տաճկերէն : Աշխատասիրութիւն Հ · Իգնատիոս Վ · Փափազեան · տպագրեալ յամին 1807 : 2,75

** ՀԱՆԳԵՐՁԵԱԼ ԿԵՆԱՑ ԳԻՐՔ · որոյ մէջ հաստատի այլ և այլ պատճառներով և օրինակներով հանդերձեալ կենաց գոյութիւնը: Թարգմանեալ'ի Յովհաննէս Վարդապետէ Նիկոմիդացւոյ, և տպագրեալ յամին 1731 :

ՀԱՇՈՒԻԳԻՐՔ ԿԱՄ ՀԱՇՈՒԻՄԱՏԵԱՆ · համառօտ սկզբունք հաշուէմատենի, այսինքն թէ ինչպէս պէտք է հաշուի տետրակ բռնել առուտուրի մէջ · նորավարժից համար գրուած ռամկօրէն լեզուաւ: Աշխատասիրութիւն Հ · Իգնատիոս Վ · Փափազեան · տպագրեալ յամին 1830 : 2,50

ՀԱՇՈՒԷՏՈՒՄԱՐ ՊԱՐԶԱԳԻՐ· նոյն է վերոյգրեալ հաշուեգրոց հետ, բայց քան զայն ընդարձակ, և ուսուցանէ վաճառականութեան մէջ գործածուած մատեաններուն ինչ ըլլալը և ինչ բանի գործածուիլը· ինչպէս են Օրհաշիւ, Մայրհաշիւ և այլն։ Աշխատասիրեալ 'ի Հ· Իգնատիոս Վ· Փափազեան, և տպագրեալ յամին 1828։ 5,50

ՀԱՄԱՐԱԿԱԽՕՍՈՒԹԻՒՆ· նախաշաւիղ աշխարհագրական գիտութեան, որ բովանդակէ ընդհանուր գիտելիքներ ուսումնական, բնական և քաղաքական աշխարհագրութեան, զանազան պատկերներով և աշխարհացոյցներով։ Աշխատասիրութիւն Հ· Ստեփանոս Վ· Ագոնց, Արքեպիսկոպոսի և Աբբայի։ Տպագրեալ յամին 1817։ Տես Աշխարհագրութիւն հին, մետասան հատոր։ 5,

ՀԱՒԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ· աղօթք Ներսեսի Շնորհալւոյ, թարգմանեալ զանազան լեզուաւ, և տպագրեալ իւրաքանչիւր լեզուաց գրերով։ Նախ տպագրեցաւ վեց լեզուաւ յամին 1810· ապա չորեքտասան, ապա վեշտասան, ապա քսանեչորս և ապա երեսուներեք լեզուաւ 'ի 1862։ 20,

ՀԵԳԵՐԷՆ· համառօտ տետրակ տղայոց հեգել ուսուցանելու համար, ուր գրուած է Սաղմոսին առաջին գլուխը վանկ վանկ, և տպագրեալ շատ անգամ։ 0,30

ՀԵԹՈՒՄ ՊԱՏՄԻՉ· է պատմիչ Կիլիկեցւոց ժամանակի, ազգակից Թագաւորաց մերոց Հեթումեանց, որ յետոյ կրօնաւորեցաւ 'ի Կիպրոս։ Գրէ իր ժամանակի թաթարաց պատմութիւնը և Ճենկիզխանի, գաղղիարէն լեզուաւ, ուսկից թարգմանեցաւ լատիներէն, և լատիներէնէ 'ի հայ ձեռամբ Հ· Մկրտիչ Վ· Աւգերեան։ Տպագրեալ յամին 1842։ 4,

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ· աշխարհագրական ստորագրութիւն մեծին Հայոց հին և միջին դարու ժամանակաց· քաղեալ 'ի նախնեաց և օտար ազգաց գրուածներէն։ Աշխատասիրութիւն ազգասիրական և օգտաւէտ Հ· Ղուկաս Վ· Ինճիճեան։ Տպագրեալ յամին 1822։ 11,

ՀԻՒՍՆԵԱԿ ԲԱՐԵԲԱՆՈՒԹԵԱՆ· ներբող սուրբ Աս-

տուածածնի վերայ տասն գլուխ բաժնած․ վերջը կան
գովասանական բանք առ սուրբ Յովսէփ աստուածա-
հայրն, քաղեալ աստուածիմաստ վարդապետաց գը-
րուածներէն։ Աշխատասիրութիւն Հ․ Մատթէոս Վ․
Եւդոկիացւոյ, տպագրեալ յամին 1775։ 2,

ՀՄՏՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՆՑ․ չորս գիրք բաժնած, ռամ-
կօրէն լեզուաւ, ուր գնէ տղայոց համար կրօնական,
պատմական և ուսումնական հարկաւոր գիտելիք, եօ-
թանասուն և երկու դաս կամ համար բաժնած։ Աշ-
խատասիրութիւն Հ․ Մինաս Վ․ Բժշկեան, տպա-
գրեալ յամին 1818, դարձեալ 'ի 1851։ 5,

ՀՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ․ գործ պիտանի և
ազգափրական երեք հատոր ընդարձակ, որ առաջին
հատորոյն մէջ խօսի Հայաստանի բովանդակ լերանց,
ջրից, գետոց, բնակչաց, և քաղաքական անցից վերայ։
Երկրորդին և երրորդին մէջ կառավարութեան, զի-
նուորութեան, բարուց, լեզուի, դպրութեան, ա-
րուեստից և կրօնից վերայ։ Աշխատասիրութիւն Հ․
Ղուկաս Վ․ Ինճիճեան։ Տպ․ յամին 1835։ 24,

— Նոյնն համառօտ աշխարհաբար մի հատոր
փոքրիկ․ աշխատասիրութիւն Հ․ Մանուէլի Վ․ Քա-
ջունւոյ, տպագրեալ յամին 1855։ 3,50

ՀՈՄԵՐՈՍԻ ԵՂԻԱԿԱՆ․ դիւցազներգութիւն համ-
բաւաւոր, ուր երգէ իր դիւցազին Աքիլլէսի Տրո-
յացոց վրէժխնդրութիւնը։ Թարգմանութիւն 'ի
յոյն բնագրէ Հ․ Եղիա Վ․ Թոմաճանեան յանգաւոր
ոտանաւոր, երկու հատոր, տպ․ 1843։ 15․

— Նոյնն գեղեցիկ եւ ընտիր և հարազատ Թարգ-
մանութեամբ 'ի չափս հայկականս 'ի Հ․ Արսէն Վ․
Կ-Բագրատունւոյ, և տպագրեալ յամի 1864։

ՀՈՄԵՐՈՍԻ ՈԴԻՍԱԿԱՆ․ դիւցազներգութիւն Հո-
մերի․ որոյ մէջ դիւցազն է Ոդիսևս․ և ինչպէս Հոմե-
րոսի Եղիականը մարզիչ է քաղաքական և զինուորա-
կան մասին մէջ, Ոդիսականը մարզիչ է բարոյական և
տնտեսական մասին մէջ։ Թարգմանութիւն 'ի յոյն
բնագրէ Հ․ Եղիա Վ․ Թոմաճանեան յանգաւոր ոտա-
նաւոր երկու հատոր․ տպեալ 1847։ 11,

ՀՈՇԻՈՍԻ ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆՔ. Քրիստոսի չարչարանաց և խաչելութեան վերայ բանաստեղծական գրուած, եօթն և տասն գլուխ բաժնած. Թարգմանեալ Հ. Մանուէլ Վ. Ջախջախեան ռամկաւոր և տպագրեալ յամին 1830։ 3,75

ՀՈՎԻՒ ՀՈԳԵՒՈՐ. օգտակար և հոգեշահ մատեան զոր շարադրեց Տէր Միքայէլ Փիանոյ ժողովրդապետ, երկու հարիւր յորդորականներէն աւելի է, ժողովրդեան ամէն հարկաւոր նիւթոց վերայ խօսի. Թարգմանութիւն ռամկօրէն Հ. Եդուարդայ Հիւրմիւզեան Արքեպիսկոպոսի Շիրակայ, հինգ միջակ հատոր։ Տպագրեալ յամին 1856։ 20,

ՀՐԱՀԱՆԳ ԵՕԹՆԵԿԻ. Աղօթագիրք որոյ մէջ կան զանազան աղօթք շաբթուն իւրաքանչիւր օրերուն համար, և հոգևոր կրթութիւններ։ Յօրինեալ 'ի Հ. Միքայէլ Վ. Չամչեան, տպագրեալ յամին 1802։ 2,25

ՀՐԱՀԱՆԳ ԿՐԹՈՒԹԵԱՆ. յաւիտենական կենաց կրթութեան հարկաւոր հրահանգներ շաբթուն ութ օրերուն վերայ բաժնած. գործ սրբոյն Իգնատիոսի Լօյոլայ, Թարգմանեալ 'ի Հ. Պետրոս Վ. Մինասեան, տպագրեալ յամին 1854։ 3,25

ՀՐԱՇԻՑ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ. զանազան պատմութիւնք հրաշից սուրբ Աստուածածնի հաւաքեալ Թարգմանութեամբ 'ի Հ. Զաքարիա Վ. Ալէքսանեան. տպագրեալ յամին 1772։ 3,25

ՀՕՀԵՆԼՕՀԷ. ընտիր հոգեշահ մատեան, որ խօսի սուրբ ըլլալու հարկաւոր նիւթոց վերայ, այսինքն մարդոյս սովորական պարտուց, Աստուծոյ պաշտաման, առաքինութիւն գործելու և մեղքէ փախչելու վերայ։ Հեղինակն է Ալէքսանդր Հօհենլոհ քահանայն. Թարգմանութիւն ռամկօրէն լեզուաւ 'ի Հ. Մկրտիչ Վ. Աւգերեան։ Տպագրեալ յամին 1838։ 2,50

ՀՈՒԳՈՆԻ ՓՈՍԿՈԼԵԱՑ ՏԱՂ ԳԵՐԵԶՄԱՆԱԿԱՆ. բանաստեղծական գեղեցիկ տաղ մը զոր գերեզմանաց վերայ յօրիներ է Փոսկոլօ իտալացի անուանի քերդողը, և Հ. Արսէն Կ-Բագրատունի Վ. Թարգմաներ է հայկական չափաբերութեամբ. տպ. յամի 1864։ 0,75

## Զ

ՁԱՅՆ ՔՐԻՍՏՈՍԻ. ազդու խրատներ 'ի դիմաց Քրիստոսի առ հաւատացեալ հոգի, և զանազան աղօթք առ Քրիստոս. յօրինեալ 'ի Մխիթար աբբայէ, 1753: 1,75

ՁԿՆՈՐՍԻՆ ՀԻՒՂԸ. վիպասանութիւն ռամօրէն լեզուաւ, տղայոց համար: Տպագրեալ յամին 1860: Տես Զբօսարան մանկանց: 2,

## Ղ

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ. պատմական գործ նախնեաց հինգերորդ դարու, ժամանակին ընտանի զրուցատրութեամբը, որ կը սկսի Արշակունեաց թագաւորութեան բաժանմանէն և կը հասնի մինչև Վահան Մամիկոնեանին մարզպանութեան ժամանակ: Տպ. յամին 1793: 3,25

## Ճ

ՃԱՇԱԿ ՀԵԼԼԷՆ ԵՒ ԼԱՏԻՆ ՃԱՐՏԱՐԱԽՕՍԱՑ. որ է Թարգմանութիւն հատընտիր ճառից յոյն և լատին քաջ ճարտարախօսաց Եսքինեսի, Դիմոսթենի և Կիկերոնի. աշխատասիրութիւն Հ. Արսէն Վ. Կ-Բագրատունւոյ, տպագրեալ յամին 1864: 4,50

* ՃԱՇՈՑ ԳԻՐՔ. Կարգաւորութիւն ընթերցուածոց Հայաստանեայց եկեղեցւոյ. մեծադիր և բաժանեալ յերկս հատորս: Տպագրեալ յամին 1685:

ՃԱՌ ԲԱՐԵԽՕՍՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՑ. Լուտերի և Կալվինոյ դէմ կը ցուցանէ սրբոց բարեխօսութիւնը և յարգութիւն պատկերաց և նշխարաց նոցա, նաև վկայութեամբ նախնեաց մերոց: Տպ. յամին 1852: 2,50

ՃԱՌ ԲՂԽՄԱՆ ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՑ ԻՏԱԼԵՐԷՆ. է Թարգմանութիւն աշխատասիրութեան Հ. Գաբրիէլ Վ. Աւետիքեան, որոյ հայերէնը տպագրեալ է Բացատրութիւն շարականաց գրքին ետև: Տպ. 'ի 1824: 2,50

ՃԱՌ ՀԱՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ . հոգեշահ մատեան թարգմանեալ 'ի գերապատիւ Մխիթարայ աբբայէ Ալփոնսոսի Ռոտրիկվեցի գրուածներէն . որ ուսուցանէ ամէն վշտաց և ցաւոց մէջ համակերպիլ Աստուծոյ կամացը ։ Տպագ . առաջին անգամ յամին 1741 ։ Կրկին թարգմանեցաւ յատակ հայկաբանութեամբ 'ի Հ . Գաբրիէլ Վ . Աւետիքեան , և տպեցաւ 1823 ։ 2,25

ՃԱՌՔ Հ . ՌԱՓԱՅԵԼԻ . ընտիր ճառք թուով ինն . որոց հինգը ներբողք են , 'ի սուրբն Ներսէս Մեծն , 'ի սուրբն Սահակ , 'ի սուրբն Մեսրոպ , և երկու 'ի Մխիթար աբբայ , և չորսը այլ և այլ կարևոր նիւթոց վրայ , ինչպէս է դաստիարակութիւն մանկանց , ուսումն հայերէն լեզուի և այլն ։ Տպ . յամին 1845 ։ 3,25

* * ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ ՍՏԵՓԱՆՈՍԻ ԱԳՈՆՑ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՒ ԱԲԲԱՅԻ . է ճարտասանութիւն ընդարձակ , հինգ գիրք բաժնած , յօրինեալ երևելի հեղինակաց հետևողութեամբ և նախնեաց ընտիր օրինակներով ։ Տպագրեալ յամին 1775 ։

ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ Հ . ԵՓՐԵՄԱՅ ՍԵԹԵԱՆ . ճարտասանութիւն ընտիր , բարձրագոյն դպրոցաց համար , երեք մասն բաժնած ։ Տպագրեալ յամին 1832 ։ 3,50

ՃՇՄԱՐԻՏ ԴԱՐՁ ԿԱՄ ՀԱՐԿԱՒՈՐ ՄՏԱԾԱԿԱՆՆԵՐ . հոգեշահ փոքրիկ մատեան յիսուսեան Պօտրանտ քահանայի , համառօտ պատմութիւններով զարդարուած . թարգմանեալ աշխարհաբար լեզուաւ 'ի Հ . Մկրտիչ Վ . Աւգերեան , և տպագ . յամին 1849 ։ 2,50

ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ ԱՌ ՁԵՌՆ . համառօտ ճարտասանութիւն գրաբար լեզուով հարց . պատասխանիով , դպրոցաց համար . աշխատասիրութիւն Հ . Եդուարդայ Վ . Հիւրմիւզեան . տպագրեալ առաջին անգամ 1839 , և երկրորդ անգամ 1850 ին ։ 2,50

* * ՃԵՄԱՐԱՆ ԳԻՏԵԼԵԱՑ . համառօտ տեղեկութիւն ամենայն ուսումնական գիտելեաց ոտանաւոր , հանդերձ զանազան պատկերներով , տղայոց համար ։ Յօրինեալ 'ի Հ . Մինաս Վ . Բժշկեան . և տպագրեալ յամին 1815 , և երկրորդ անգամ 1818 ։

# Մ

ՄՕԳԴԱՂԻՆԷ․ վիպասանութիւն Յուլիոսի Սանտոյի, թարգմանեալ ռամկօրէն լեզուաւ, և տպագրեալ յամին 1860։ Տես Զբօսարան մանկանց։ 2,25

ՄԱՀ ԱԲԵԼԻ․ ընտիր քերթուած Կեսների գերմանացւոյ Աբելի մահուան վերայ․ թարգմանեալ 'ի Հ․ Մանուէլէ Վ․ Ջախջախեան․ տպագրեալ առաջին անգամ 'ի 1833, և երրորդ անգամ 'ի 1862։ 4,

ՄԱՂԹԱՆՔ ՋԱՓԱՒ․ ընտիր աղօթագիրք ոտանաւոր, ուր կան աղօթք առաւօտեան երեկոյեան, Պատարագի և Ճանապարհ խաչի, և զանազան սրբոց համար աղօթքներ և Սաղմոսներ․ յօրինեալ 'ի Հ․ Եդուարդայ Վ․ Հիւրմիւզեան, որոյ վերջին աղօթքը որ մակագրեալ է Մաղթանք քերդողին, իր անունը կը կապէ․ տպագրեալ յամին 1843 պատկերազարդ և գունաւոր զարդերով։ 5,50

ՄԱՄԲՐԷ․ տես Կորիւն։

ՄԱՆՐԱՆԿԱՐ ԿԱՄ ՄԻՆԻԱԹՈՒՌԱ․ ուսումն մանր նկարելոյ զպատկերս և զայլ առարկայս, տախտակօք հանդերձ․ յօրինեալ 'ի Հ․ Իգնատիոս Վ․ Փափազեան, և տպագրեալ յամին 1813։ 5,

ՄԱՇՏՈՑ․ ծիսարան կամ գիրք արարողութեանց Հայաստանեայց եկեղեցւոյ․ յօրինեալ սրբոյն Մեսրոպայ, աջակցութեամբ սրբոյն Սահակայ․ անոր համար սրբոյն Մեսրոպայ անուամբ կոչեցաւ Մաշտոց։ Որոյ վերայ վերջը Յովհան Մանդակունին և ուրիշ նախնիք յաւելուածներ ըրին։ Տպեցաւ 1840 ին։ 13,

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ՄԱՆԿԱՆՑ․ չորեքտասան փոքրիկ հատորներ, որոց մէջ զուարճալի և օգտակար պատմութիւններ գրուած են վիպասանական ոճով տղայոց համար․ հրատարակումը սկսած է 1840 ին և հետզհետէ առանձին հատորներով շարունակուած ռամկօրէն լեզուով։ Երկրորդ տպագրութիւնը եղած է 1853 ին։ 10,

ՄԱՐԴԱՎԱՐՈՒԹԻՒՆ · փոքրիկ մատեան որ կ'ուսուցանէ մարդկային ընկերութեան պատշաճողութիւնները։ Յօրինեալ 'ի Հ· Ռափայէլ Վ· Թրեանց, և տպագրեալ յամին 1856։ 1,50

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԳՈՐԾՈՑ ԽՄԲԱԳԻՐ · է մեկնութիւն Գործոց առաքելոց, համեալ համառօտութեամբ կամ քաղուածով 'ի գործոց Ոսկեբերանի և Եփրեմի և ուրիշ անձանց։ Հեղինակին անունը անյայտ է, բայց թուի թէ Գրիգոր վկայասէրէն վերջը կ'ըլլայ։ Տպագրեալ յամին 1839։ 8,

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՐԳՈՑ ԵՐԳՈՑՆ · է մեկնութիւն Երգոց երգոյն Սողոմոնի · յօրինեալ 'ի Գրիգորէ Նարեկացւոյ պարզ ոճով և իմաստալից բանիւ և գեղեցիկ հայկաբանութեամբ · տպագրեալ յամին 1789։ 2,50

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԺՈՂՈՎՈՂԻ · է բացատրութիւն Ժողովող գրոց Սողոմոնի · յօրինեալ 'ի Մխիթարայ Աբբայէ · տպագրեալ յամին 1736։ 3,

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐ ՄԵՐԻ · Գործ Փաւլոյ Սէնեկրի յիսուսեան կարգէն · Թարգմանեալ տաճկերէն լեզուով Երամեան Յովհաննէս աղայէ։ Գործոյն վերջը գրուած է նաև խաչ եօլու։ Տպագ · յամին 1824։ 2,50

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷԻ · գործ ընդարձակ յօրինեալ 'ի Մխիթարայ աբբայէ գեղեցիկ վարդապետութեամբ, որոյ մէջ կան հաւատոյ քանի մի խնդրոց բացատրութիւն։ Տպագրեալ յամին 1737 ։ 11,

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑ · ընդարձակ և դիւրիմաց բացատրութեամբ ութ կանոնաց Սաղմոսի · տասնհատոր բաժնած ։ Աշխատասիրեալ 'ի Հ · Միքայէլ Վ · Չամչեան, և տպագրեալ յամին 1815։ 66,

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԹՂԹՈՑ ՊՕՂՈՍԻ · է ճոխ և ընդարձակ բացատրութիւն չորեքտասան թղթոց Պօղոսի, որոյ մէջ կան կարեւոր տեղեկութիւնք աստուածաբանական գիտութեանց և եկեղեցական հնութեանց, և զանազանութիւնք թարգմանութեանց և հայերէն գրչագիր օրինակաց։ Յօրինեալ 'ի Հ · Գաբրիէլ Վ · Աւետիքեան, բաժանեալ երեք մեծ հատոր · և տպագրեալ յամին 1806։ 38,

ՄԵԹԱՍԹԱՁԻՕ. է փոքրիկ մատեան յորոյ մէջ կան հինգ ողբերգութիւնք՝ այսինքն Աբէլի, Իսահակայ, Յովսէփ գեղեցկի, Քրիստոսի չարչարանաց և Բեթուղուա քաղաքին ազատութեան. հեղինակն է իտալացի քերթողն Մեթասթազիօ. Թարգմանեալ տաճկերէն լեզուաւ Երամեան Յովհաննէս աղայէ. տպագրեալ յամին 1831 և երկրորդ անգամ 'ի 1839: 2,25

ՄԻԼՏՈՆԻ ԿՈՐՈՒՍՏ ԴՐԱԽՏԻՆ. է դիւցազներգութիւն Միլտոնի անգղիացի ընտիր հեղինակի, որ ճառէ մեր նախահօր Ադամայ դրախտէն հալածուիլը. բաժնած է երկոտասան երգ. Թարգմանեալ 'ի չափս հայկականս 'ի Հ. Արսէն Վ. Բագրատունւոյ, և տպագրեալ 1861 ին:

Կայ ուրիշ հին Թարգմանութիւն մը արձակ, 'ի Հ. Յարութիւն Վ. Աւգերեան որ տպագրեալ է 1824 ին, որոյ մէջ կան քերթողին և քերթուածոյն վերայ տեղեկութիւններ, և համառօտ մեկնութիւններ. բայց այս Թարգմանութիւնը սպառեալ է: 6,25

ՄԵՍՐՈՊԵԱՆ ՏԱՌՔ. հին Մեսրոպեան գլխագիր տառեր ութ տախտակ. տպեալ 'ի 1816:

ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑԻ. գործ նախնեաց, երկոտասաններորդ դարու, որ խօսի ջերմի հիւանդութեան և ուրիշ քանի մի հիւանդութեանց վերայ. տպ. 'ի 1832: 3,75

ՄԽԻԹԱՐ ԳՕՇ. գործ նախնեաց փոքրիկ հատոր մը որոյ մէջ կան զանազան առակներ, որք կոչին Մխիթար Գօշի անուամբ: Առաջին տպագրութիւնը եղած է 1790 ին, և վերջին տպագրութիւնը եղած է 1842 ին, որոյ մէջ յաւելեալ է նաև Ոլոմպիանու առակները: 2,30

√ ՄՇՏՆՋԵՆԱՒՈՐ ՊԱՐՁԱՏՈՒՄԱՐ. տախտակք ամենայն տէրունական տօնից և սրբոց և աւուրց պահոց, յարմարեալ 'ի վերայ աւուրց ամսոց ըստ իւրաքանչիւր տարեգրի, հանդերձ տօնացուցիւ: Աշխատասիրութիւն Հ. Վրթանէս Վ. Ասկերեան, տպագրեալ յամին 1782: 4,

ՄՏԱԾՈՒԹԻՒՆՔ Ի ՎԵՐԱՅ ԵՕԹՆ ՑԱՒՈՑ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ. փոքրիկ մատեան աշխարհաբար և գրաբար սուրբ Աստուածածնի եօթն ցաւոց վերայ եօթն

մտածութիւններ: Աշխատասիրութիւն Հ. Գաբրիէլ Վ. Աւետիքեան, տպագրեալ 'ի 1810: 2,

ՄՏԱԾՈՒԹԻՒՆՔ Ի ՎԵՐԱՅ ՉԱՐՉԱՐԱՆԱՑ ՔՐԻՍՏՈՍԻ. փոքրիկ մատեան որոյ մէջ կան քսան և վեց մտածութիւնք Քրիստոսի չարչարանաց վերայ: Աշխատասիրութիւն Հ. Մատթէոս Վ. Եւդոկիացւոյ, տպ. 'ի 1759: 2,

ՄՏԱԾՈՒԹԻՒՆՔ ԿԱՄ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՔ Հ. ԳԱԲՐԻԷԼԻ ԱՒԵՏԻՔԵԱՆ. փոքրիկ մատեան, որոյ մէջ կան ընտիր մտածութիւններ տնօրինական տօնից, Աստուածածնի և խաչի և սուրբ շաբաթու: Ընդ ամենը երեսուն և երեք մտածութիւններ: Տպ. 1836 ին: 2,75

ՄՕՐ ՄԸ ՔԱՇԱԾ ՎԻՇՏԵՐԸ. է վիպասանական գրուած. Թարգմանեալ ռամկօրէն լեզուաւ և տպագրեալ 1860 ին: Տես Զբօսարան մանկանց: 2,

## Յ

ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ. գործ Նախնեաց, Գրիգորի Լուսաւորչի, որ է վարդապետական գրուած քսանևերեք ճառ բաժնած այլ և այլ բարոյական նիւթոց վերայ: Տպագրեալ 1838 ին: 5,

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԱԾԳԻՏՈՒԹԵԱՆ. գիրք հոգեշահ, որոյ մէջ գրուած են հարցմամբք պատասխանեօք հարկաւոր գիտելիք Աստուծոյ և քրիստոնէական հաւատոյ վերայ. բաժանեալ տարւոյն յիսուն և երկու կիրակէից և հինգ տաղաւարներուն վերայ: Յօրինեալ ռամկօրէն լեզուաւ 'ի Հ. Մինասայ Վ. Բժշկեան: Տպագրեալ առաջին անգամ 1820 ին և երկրորդ անգամ 1836 ին: 3,50

* ՅԱՐԱՑՈՅՑ ԱՊԱՇԽԱՐՈՂԻ. է մեկնութիւն Ողորմեա ինձ Աստուած սաղմոսի, Դաւթի մարգարէին վարուց պատմութեամբը 'ի միասին՝ 'ի յորդոր և 'ի քաջալեր ապաշխարողաց: Թարգմանեալ 'ի Պետրոս Վարդապետէ Թիֆլիզեցւոյ, և սրբագրութեամբ 'ի լոյս ընծայեալ 'ի Մխիթարայ Աբբայէ: Տպ. 1731 ին:

ՅՈԲԱՅ ԳԻՐՔ. Տաղաչափեալ 'ի չափս հայկականս և լուսաբանեալ 'ի Հ. Եդուարդ Վ. Հիւրմիւ-

ղեան, արքեպիսկոպոսէ Շիրակայ, և տպագ․ ՚ի 1862 ։ 2,

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԻՄԱՍՏԱՍԻՐԻ ՕՁՆԵՑՒՈՅ ՃԱՌ ԸՆԴԴԷՄ ԵՐԵՒՈՒԹԱԿԱՆԱՑ․ գործ նախնեաց ութերորդ դարու, որոյ մէջ զօրաւոր խօսքերով կը ջախջախէ երևութական աղանդաւորաց մոլորութիւնը, և կը հաստատէ Քաղկեդոնի սուրբ ժողովոյն ուղղափառ վարդապետութիւնը ։ Տպագրեալ 1807 ին հանդերձ ծանօթութեամբք ՚ի Հ․ Մկրտիչ Վ․ Աւգերեան ։ 2,

— Նոյն ճառը դարձեալ տպագրեցաւ յամի 1816 հանդերձ լատիներէն թարգմանութեամբ և յաւելուածով ծանօթութեանց ։

— Նորին մատենագրութիւն, յորում են Ատենաբանութիւն ժողովական՝ ընտիր հայկաբանութեամբ․ և կրկին ճառք ընդդէմ Պաւլիկեան աղանդաւորաց թշնամեաց եկեղեցւոյ, և բացայայտութիւն կարգաց եկեղեցւոյ կամ եկեղեցական պաշտամանց ։ Տպագրեալ յամին 1833 ։

ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ․ գործ նախնեաց հինգերորդ դարու․ են ճառք խրատականք յատակ և ընտիր ոճով, թուով քսան և վեց, զանազան նիւթոց վերայ, և ՚ի վերջոյ քանի մի կցկտուր բանք ։ Տպագրեալ ՚ի 1836․ և երկրորդ անգամ ՚ի 1861 ։ 5,50

ՅՈՎՍԷՓ ԳԵՂԵՑԻԿ․ վիպասանութիւն ընտիր և սրտաշարժ Պիթոպէի գաղղիացւոյ ։ Թարգմանեալ ռամկօրէն լեզուաւ ՚ի Հ․ Վ․ Շիշմանեան, տպագրեալ յամին 1857 ։ 3,25

## Ն

ՆԱԽԱԿՐԹՈՒԹԻՒՆ ԻՏԱԼԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ․ փոքրիկ հատոր մը իտալերէն լեզուն նոր սկսողներուն համար․ որոյ սկիզբը կան իտալերէն հարկաւոր բառեր և զրուցատրութիւններ հանդերձ հայերէն թարգմանութեամբ, և վերջը զանազան արձակ գրութիւններ իտալերէն լեզուաւ ։ Տպագրեալ յամի 1834 ։

ՆԱՐԵԿ․ գործ նախնեաց տասներորդ դարու, և է աղօթագիրք ընտիր և խորիմաց Ս․ Գրիգորի Նարեկա-

ցւոյ, որ պարզապէս Նարեկ կոչի, և կան մէջը իննըսուն և հինգ ողբերգական աղօթք: Առաջին անգամ տպագրեցաւ 'ի 1789 և վերջին անգամ 'ի 1851: Ետևը գրուած է տասնհինն բժշկութեան աւետարաններ: 4,

**ՆԱՐԵԿ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ. է աղօթագիրք պատկերազարդ, հաւաքեալ Գրիգորի Նարեկացւոյ աղօթքներէն և Ճառերէն, և յարմարեալ շաբթուն իւրաքանչիւր օրերուն վերայ: Տպագրեցաւ առաջին անգամ 'ի 1793, և վերջին անգամ 'ի 1804:

— Նորին մատենագրութիւն. է մի հատոր մեծադիր, որոյ մէջ տպուած է Ս. Գրիգորի Նարեկացւոյ ամէն գործը. այսինքն Նարեկ անուանեալ աղօթագիրքը, Երգոց երգոյն մեկնութիւնը, պատմութիւն ամենազօր նշանի խաչին ուխտին Ապարանից, և ներբողք 'ի վերայ սրբոյ խաչին, սրբոյ Աստուածածնի, Առաքելոց, սրբոյն Յակովբայ Մծբնայ և գանձք և տաղք եկեղեցականք, և խրատական բանք վասն ուղիղ հաւատոց և մաքուր վարուց առաքինութեան: Տպագրեալ 'ի 1840: Սոյնը տպուած է 1827 ին, առանց Նարեկ անուանեալ աղօթագրոց: 7,50

ՆԱՐԵԿԱՅ ԼՈՒԾՈՒՄՆ. բացատրութիւն խոր և մըթին բանից և իմաստից Նարեկ անուանեալ աղօթագրոց. արարեալ 'ի Հ. Գաբրիէլ Վ. Աւետիքեան, յորում է և բացախօսութիւն կամ մեկնաբանութիւն միոյ հատուածոյ Գումարք խմբից անուանեալ ներբողի սուրբ Աստուածածնի: Առաջին տպագրութիւնը եղաւ 1801 ին. վերջինը 1859 ին: 7,50

ՆԱՐԵԿԱՅ ՃԱՌԻՑ ԼՈՒԾՈՒՄՆ. Նոյնպէս բացատրութիւն խոր և մթին բանից և իմաստից այլ և այլ Ճառից Նարեկացւոյն. արարեալ 'ի Հ. Գաբրիէլ Վ. Աւետիքեան, յորում է և բացախօսութիւն նորին 'ի բանն «Խորախացիր յաւէտ հրճուանօք». տպ. յամի 1827:

ՆԱԽՈՒՂՂՈՒԹԻՒՆ. է մեծադիր մատեան միահատոր, որ ուսուցանէ նաւարկութեան արուեստը ուսումնական ոճով: Կայ վերջը նշանակաց, ծոցոյ և հատանողաց աղիւսակներ: Հեղինակն է Հ. Ղուկաս Վ. Օղուլլուգեան. տպագրեալ 'ի 1809: 7,50

ՆԵՂՈՍԻ ՃԱՌՔ ըստ կրկին թարգմանութեանն Նախնեաց․ տես Վարք Հարանց։

ՆԿԱՐԱԳԻՐ ԱՌԱՔԻՆԻ ԵՒ ԶԳՕՆ ԱՆՁԻՆ․ է փոքր մատենիկ, տպագրեալ հանդերձ իտալերէնով, որոյ ռամկօրէն թարգմանութիւնը կայ Պլանշարայ Դպրոց բարուց ըսուած գրքին մէջ․ տես անդ։ Գրաբար թարգմանութիւնը ըրած է Գեր․ Սուքիաս Վ․ Սոմալեան, և տպագրեալ յամին 1836։ 1,75

ՆԿԱՐԱԳԻՐ ԵՐԵՒԵԼԻ ԱՐԱՆՑ․ այբուբենի կարգաւ համառօտ պատմութիւն սրբոց և երևելեաց արանց, ռամկօրէն լեզուաւ, տղայոց համար։ Աշխատասիրութիւն Հ․ Մինաս Վ․ Բժշկեան։ Տպ․ յամին 1850։ 6,50

ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅՆ ԱԼՈՅԶԻՈՍԻ․ է փոքրիկ մատեան ռամկօրէն լեզուաւ, որոյ մէջ գոյ սրբոյն Ալոյզիոսի Գոնզակայ վարքը 'ի նմանութիւն մանկանց։ Գործոյն վերջը կան գրաբար ոտանաւորք մականուանեալ Յաղթանակ սրբոյն Ալոյզեայ։ Աշխատասիրութիւն Հ․ Ղեւոնդ Վ․ Ալիշան։ Տպ․ 'ի 1853։ 2,

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ․ տես Աւետարան կտակարան։

ՆՈՒԱԳԱՐԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆՑ․ մեկնութիւն աւագ օրհնութեանց Սաղմոսի և Սուրբ գրոց․ համեմատեալ եբրայական բնագրին և այլ և այլ ազգաց թարգմանութեանց հետ․ աւելցունելով այլ և այլ իմաստներ շարականի աւագ օրհնութիւններէն ևս։ Աշխատասիրութիւն Հ․ Միքայէլ Վ․ Չամչեան․ տպագրեալ 'ի 1801։ 3,50

ՆՈՒԱԳՔ Հ․ ՂԵՒՈՆԴԵԱՅ Մ․ ԱԼԻՇԱՆ․ հինգ հատոր բանաստեղծական գրութիւնք, յանգաւոր ոտանաւորք գրաբար լեզուով․ առաջին հատորը կոչի Մանկունի, է աղօթագիրք մանկանց․ երկրորդ հատորն է Մաղթունի որ և առանձին երեք մասն բաժնած է Մաղթունի, Խոհունի, Բնունի․ առաջնոյն մէջ կան բարեմաղթական ոտանաւորք առ այլ և այլ անձինս և նիւթս․ երկրորդին մէջ ոտանաւորք այլ և այլ բարոյական նիւթոց վերայ․ երրորդին մէջ բնութեան նկարագրութիւնք։ Երրորդ հատորն է Հայրունի, որոյ մէջ կան Հայաստանի երևելի անձանց և յիշատակաց վերայ ո֊

տանաւորք․ և Նահապետի աշխարհիկ լեզուաւ ոտա-նաւորք․ այս հատորը քան զայլս սքանչելի է վառ-վառուն իմաստներով։ Չորրորդ հատորն է Տէրունի, իբր աղօթագիրք մեծահասակ մարդոց։ Հինգերորդ հա-տորն է Տխրունի, տխուր նիւթոց և յիշատակաց վե-րայ։ Տպագրեալ ՚ի 1857–58։ Կը վաճառուի երկհա-տոր միատեղ կազմեալ և առանձին հատոր։ 18 ,

ՆՈՒԷՐ ՍԻՐՈՅ․ աղօթագիրք Աստուածածնի, շաբթուն եօթն օրուան վերայ բաժնած։ Աշխատա-սիրութիւն Հ․ Մկրտչի Վ․ Աւգերեան․ տպ․ ՚ի 1854։ 2 ,

## Ծ

ԾՆՈՐՀԱԼԻՈՅ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹՔ․ գործ նախնեաց, զանազան Թուղթեր առ համօրէն հայաստեա ազինս, առ կրօնաւորս, առ եպիսկոպոսս, առ քա-հանայս, առ իշխանս, առ զինուորս, առ քաղաքացիս, առ երկրագործս և առ կանանց դասս։ Տպագրեալ յամին 1830։ 2 ,50

— Նոյն հայ․ լատ․ հանդերձ յաւելուածովք։ Տպագրեալ յամին 1829։ 4 ,

— Նոյն միայն լատ։ Տպագրեալ յամին 1829։ 2 ,50

— Նորին Չափաբերականք, այսինքն Շնորհա-լոյն ոտանաւոր գրուածներն, որ են Յիսուս որդի, ողբ-երգութիւն․ — Բան հաւատոյ․ Ներբող սուրբ Խաչին․ — Մաղթանք առ սուրբ հրեշտակս․ — Յաղագս երկնից։ Թուղթեր՝ առ Աղիրափ իշխան․ Առ ոմն իշխան արեւելեան։ Այլ և այլ խրատներ, տաղեր սրբոց վերայ և տէրունա-կան տօնից։ Գանձեր։ Վիպասանութիւն Հայկազանց․ Ա-ռակներ և հանելուկներ։ Տպագրեալ յամին 1830։ 5 ,50

— Նորին Նամականի, յորում կը բովանդակին Ատենաբանութիւն․ — Նորին ընդհանրական Թուղթք առ համօրէն հայաստեա ազինս (տես Շնորհալւոյ ընդ-հանրական Թուղթք)․ — Շրջաբերական ՚ի Կարս․ — Մխիթարական առ ուրուկս յԵդեսիա․ — Զանազան Թուղթեր առ այլ և այլ անձինս և առ պատրիար-գունս և կայսերս ոմանս Յունաց։ Տպ․ յամին 1838։ 3 ,

## Ո

ՈՂՈՄՊԻԱՆՈՍԻ ԱՌԱԿՔ։ Տես Մխիթար Գօշ։

ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ՔԱՂՈՒԱԾՈՅ ՃԱՌՔ. յերկուս հատորս։ Առ անկեալն Թէոդորոս, երկու Ճառ. — Յաղագս կուսութեան. — Յաղագս քահանայութեան, գիրք վեց. Յերանելին Բաբէլաս։ — Այլ և այլ ներբողներ սրբոց վերայ։ — Անդրիական Ճառեր։ Նոր թարգմանութիւն Հ. Եղիա Վ. Թովմաճանեան'ի յոյն բնագրէն, և լուսաբանեալ'ի նմանէ ծանօթութեամբք։ Տպագրեալ յամին 1818։ 16, 50

—Նորին յԱւետարանագիրն Մատթէոս, ընտիր թարգմանութիւն նախնեաց, երկու հատորի մէջ ամփոփուած։ Տպագրեալ յամին 1826։ 11,

— Նորին Հատուածք, Մատթէի մեկնութեան ու Պօղոսի Թղթոց։ Տպագրեալ'ի 1826։

— Նորին Մեկնութիւն Թղթոյն Պօղոսի և այլ և այլ Ճառք ընտիր թարգմանութեամբ նախնեաց, տպագրեալ'ի 1861 յերկս հատորս։ Ասոր մէջ գտնուած Ճառերէն մէկ քանին կը գտնուին'ի թարգմանութեան Ճառից Հ. Եղիա Վ. Թովմաճան։

ՈՐՍՏԵԱՅ ԱՐՈՒԵՍՏ ՔԵՐԹՈՂԱԿԱՆ, Կուինտոսի Ուրատեայ Փլակկոսի լատին քերթողի, որոյ մէջ խօսի քերթողական արուեստին վերայ։ Թարգմանեաց հայկական չափով, ընտիր հայկաբանութեամբ և հմուտ ծանօթութեամբք Հ. Արսէն Վ. Բագրատունի. տպագրեալ'ի 1847. և կազմեալ'ի միասին ընդ Վիրգիլեայ Մշակականաց։

ՈՒՂԵՒԾՈՒԾ. համառօտութիւն աստուածաբանութեան. Թարգմանեալ'ի Պետրոս Վարդապետէ Թիֆլիզեցւոյ. տպագրեալ յամին 1748։ 3,

## Պ

ՊԱՇՏՕՆ ԿՈՒՍԻՆ. է աղօթագիրք սուրբ Աստուածածնի, յորում են ամնօրեայ մտածութիւնք, և ջեր-

մեամղական աղօթք առ սուրբ կոյսն Աստուածածին ։ Աշխատասիրեալ ՚ի Հ․ Իգնատիոս Վ․ Փափազեան ռամկօրէն լեզուաւ և տպագրեալ 1818 ին․ և երկրորդ անգամ ՚ի 1862 ։ 3,

ՊԱՏԿԵՐ ՏՕՆԻՑ․ յորում են ներբողեան ճառք, յարմարեալք ՚ի խորհրդաւոր բանից Սուրբ գրոց վասն տօնախմբութեանց սուրբ Կուսին․ վերջը դրուած կայ տասներորդ ճառ մը սրբոյն Յովսեփայ վերայ ։ Աշխատասիրեալ ՚ի Հ․ Միքայէլ Վ․ Չամչեան․ տպագրեալ յամին 1805 ։ 4,50

ՊԱՏՃԷՆՔ ՆԱՄԱԿԱՑ․ են զանազաննամակք պատշաճեալք ՚ի վաճառականութիւն․ Թուով երկուհարիւր յիսուն և մի․ և ՚ի վերջոյ հրահանգ փոխանակագրոյ, խոստմնագրոյ, անդորրագրոյ և այլն ։ Աշխատասիրութիւն Հ․ Իգնատիոս Վ․ Փափազեան ։ Տպագրեալ յամին 1826 ։ 3,50

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՑ․ է համառօտ պատմութիւն հարցմամբ պատասխանեօք ռամկօրէն լեզուաւ, մի հատոր, դպրատանց տղայոց համար․ որոյ մէջ կան պատմութիւն արևելեան և արևմտեան կայսերաց Եւրոպիոյ, Ասիոյ, Ափրիկոյ և Ամերիկոյ տէրութեանց ։ Աշխատասիրութիւն Հ․ Աբրահամ Վ․ Ճարեան ։ Տպագրեալ յամին 1846 ։ 6,

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԱԶԳԱՑ․ ընդհանուր պատմութիւն հին և նոր ազգաց ռամկօրէն լեզուաւ դպրատանց տղայոց համար․ հինգ հատոր ։ Տպագրեալ յամին 1849–1851 ։ 14,

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԻՆ ԱԶԳԱՑ․ մի փոքրիկ հատոր համառօտ, աշխարհաբար լեզուաւ․ յամին 1848 ։ 3,

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՆԳՂԻՈՅ․ համառօտ պատմութիւն Անգղիոյ, Լամպ Ֆլէօրի գաղղիացւոյն․ Թարգմանեալ ռամկօրէն լեզուաւ դպրոցաց համար ։ Տպագրեալ յամին 1862 ։ 4,

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԳԱՂՂԻՈՅ, ՚ի սկզբանէ մինչև ցանկումն Նաբոլէոնի մեծի, երկհատոր ։ Աշխատասիրութիւն Հ․ Աբրահամ Վ․ Ճարեան ։ Տպագրեալ յամին 1849 ։ 7,50

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՌՈՒՍԱՑ. *միահատոր պատմութիւն Ռուսաց: Տպագրեալ յամին* 1836: 4,

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՕՍՄԱՆԵԱՆ. *երկհատոր պատմութիւն Օսմանեան տէրութեան. գրաբար լեզուաւ: Տպագրեալ յամին* 1841: 12,

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՕՍՄԱՆԵԱՆ ԹԱԳԱՒՈՐԱՑ ԵՒ ՎԷԶԻՐԱՑ. *հատընտիր պատմութիւն երևելի Թագաւորաց և վէզիրաց Օսմանեան պետութեան. մի հատոր աշխարհաբար: Տպագրեալ յամի* 1848 *ծախիւք Սիւլէյման փաշայի, դեսպանի Օսմանեան պետութեան'ի Փարիզ:* 4,50

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՆԻՈՅ. *է Ճանապարհորդութիւն 'ի Լեհաստան, յորում խօսի Անի քաղաքէն եղած գաղթականներուն, և իրենց Տաւրիզ և Լեհաստանի մէջ ունեցած բնակութեան համար: Աշխատասիրութիւն Հ. Մինաս Վ. Բժշկեան. տպագրեալ'ի* 1830: 7,

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՊՈՆՏՈՍԻ. *Պոնտոսի կամ Սևածովուն շրջակայքն եղած քաղաքներու և մէջի հայազգի ժողովրդեան վերայ տեղեկութիւն: Աշխատասիրութիւն Հ. Մինաս Վ. Բժշկեան ռամկօրէն լեզուաւ. տպագրեալ յամի* 1819: 4,

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՉՈՐԻՑ ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹԵԱՆՑ. *այսինքն Եգիպտացւոց, Պարսից, Մակեդոնացւոց և Հռոմայեցւոց, հարցմամբ պատասխանեաւ, ռամկօրէն լեզուաւ: Աշխատասիրութիւն Հ. Եփրեմ Վ. Սեթեան. տպագրեալ այլ և այլ անգամ. և վերջին տպագրութիւնը եղած է յամին* 1848: 3,

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԻ. *համառօտութիւն հին և նոր կտակարանաց ռամկօրէն լեզուաւ: Աշխատասիրութիւն Յովհ. Վ. Զօհրապեան. տպագրեալ առաջին անգամ'ի* 1803. *հինգերորդ անգամ'ի* 1859: 4,

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ. *դասաւական պատմութիւն հին և նոր կտակարանի համառօտ, ռամկօրէն լեզուաւ, հարցմամբ պատասխանեաւ: Աշխատասիրութիւն Հ. Եփրեմայ Վ. Սեթեան: Տպագրեալ առաջին անգամ'ի* 1832. *չորրորդ անգամ'ի* 1857: 3,

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՅՈՒՆԱՑ, ՀՌՈՎՄԱՅԵՑՒՈՑ ԵՒ ՀԱՅՑ ԵԿԵՂԵՑՒՈՑ․ ’ի պէտս ուսման ազգային վարժարանաց ռամկօրէն լեզուաւ։ Տպագրեալ ’ի 1856։ 6,

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԵԾԻՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻ․ Թարգմանութիւն նախնեաց հինգերորդ դարու․ և ’ի վերջս կայ Խաչատրոյ Կեչառեցւոյ բարանութիւնք ’ի մահն Աղէքսանդրի։ Տպագրեալ յամին 1842։ 26,

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԱՐՕՆՈՅ․ տես Զենոբ Գլակ։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑՒՈՑ․ է համառօտ պատմութիւն եկեղեցւոյ միահատոր մեծադիր, սկսեալ ’ի Քրիստոսէ հասանէ մինչև ցիննևտասներորդ դար։ Աշխատասիրութիւն Տեառն Իգնատիոս Վ․ Փափազեան Տարօնոյ արքեպիսկոպոսի գրաբար լեզուաւ։ Տպագրեալ յամին 1848։ 12,

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ․ ընդարձակ պատմութիւն եռահատոր մեծադիր․ որ սկսեալ ’ի սկզբանէ աշխարհի հասանէ մինչև ցամն 1784․ ’ի վերջին հատորի գոյ ժամանակագրութիւն հանդերձ աղիւսակօք այլ և այլ թուականաց։

Պատմութիւն Հայոց միահատոր գրաբար․ տես Խրախճան։

Պատմութիւն Հայոց միահատոր տաճկերէն․ տես Կիւլլարի։

** ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ՀԱՄԱՌՕՏ․ ռամկօրէն լեզուաւ վասն դպրոցաց, հարցմամբ պատասխանեաւ․ մի փոքրիկ հատոր։ Աշխատասիրութիւն Հ․ Եփրեմ Վ․ Սեթեան․ տպ․ ’ի 1839 և երկրորդ անգամ ’ի 1843։

— Նոյնն աշխատասիրութիւն Հ․ Համազասպայ Վ․ Թէրզիմանեան․ մի փոքրիկ հատոր, երկու մաս բաժնած, մին համառօտ, միւսն ընդարձակ․ տպեալ առաջին անգամ ’ի 1848․ վերջին անգամ ’ի 1860։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԽԻԹԱՐԱՅ ԱԲԲԱՅԻ․ պատմութիւն վարուց հիմնադրի Մխիթարեան Միաբանութեան։ Աշխատասիրութիւն Տեառն Ստեփաննոսի Վ․ Ագոնց Արքեպիսկոպոսի․ տպագրեալ 1810։ 4,

— Նոյնն համառօտ հայ․ իտալ։ Աշխատասիրու-

թիւն Հ. Յարութիւն Վ. Աւգերեան։ Տպ. 'ի 1819։ 2,50

— Նոյնն միայն իտալերէն տպագրեալ 'ի 1846։

— Նոյնն գաղղ. 'ի Մոսիւ Պ՛որէէ՝ տպ. 'ի 1835։

— Նոյնն 'ի Մոսիւ Լը Վայլեանէ՝ տպ. 'ի 1863։ 2,50

— Նոյնն 'ի Մոսիւ Լանկլուայէ. տպ. 'ի 1864։ 2,

— Նոյնն անգղիարէն 'ի Մըսթըր Կուտէ անգղիացւոյ. տպագրեալ յամին 1825։ 2,50

— Նոյնն դարձեալ մեծագիր, տպ. 'ի 1835։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԹՌՉՆՈՑ. ստորագրութիւն զանազան տեսակաց թռչնոց. հանդերձ պատկերօք իւրաքանչիւր թռչնոց։ Աշխատասիրութիւն Հ. Սամուէլ Վ. Խոկընտերեան, ռամկօրէն լեզուաւ, տպ. 'ի 1815։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՉՈՐՔՈՏԱՆԵԱՑ. ստորագրութիւն ցամաքային կենդանեաց ռամկօրէն լեզուաւ։ Մինչև ցարդ տպեալ են պատմութիւն Կապկաց և Փղի. հանդերձ պատկերօք նոցին։ Աշխատասիրութիւն Հ. Ղուկաս Վ. Ինճիճեան. տպ. 'ի 1801, և 'ի 1814։

ՊԱՐՏԷԶ ՄԵԾ. աղօթագիրք գրաբար, որոյ մէջ կան հարկաւոր աղօթք, Պատարագի, խոստովանութեան, հաղորդութեան, վարդարանի, իւրաքանչիւր աւուր շաբաթու և այլն. տպագրեալ 'ի 1816, և վերջին անգամ 'ի 1823։ 3,

— Նոյնն փոքրագիր և մանրագիր տպագրեալ վերջին անգամ յամին 1864։

ՊԱՐԹԵՂԸՄԻ. ուղևորութիւն կրտսերոյն Անաքարսեայ յՆըլլադա, վեց հատոր. որոց մէջ կ'աւանդէ հեղինակը Յունաց ազգային սովորութիւնքն, օրէնքն և քաղաքական պատմութիւնը. վերջին հատորին մէջ կան զանազան աղիւսակք և ցուցակք անուանց և քաղաքաց յիշատակելոց։ Թարգմանեալ 'ի Հ. Եդուարդայ Վ. Հիւրմիւզեան. տպ. յամին 1843–1846։ 40,

ՊԼԱՆՇԱՐԻ ԴՊՐՈՑ ԲԱՐՈՒՑ. տես Դպրոց բարուց։

ՊԼՈՒՏԱՐՔԵԱՑ ԶՈՒԳԱԿՇԻՌՔ. գործ ընտիր վեց հատոր, որոյ մէջ Յունաց և Հռովմայեցւոց երևելի մարդիկը և զօրավարները իրարու կը բաղդատէ։ Թարգմանեաց յունարէն բնագրէ Հ. Եղիա Վ. Թոմաճանեան. տպագրեալ յամին 1835։ 46,

ՊՈԼԻԿՏՈՍ. ողբերգութիւն Գոռնէյլի գաղղիացւոյ, 'ի հինգ հանդէս. Թարգմանեաց յանգաւոր ոտանաւոր Հ. Գէորգ Վ. Հիւրմիւզեան Աբեղ. Միւնեաց. տպագրեալ յամին 1858: Պոլիկտոս է վկայ հայկազն նահատակեալ 'ի Մելիտինէ քաղաք փոքուն Հայոց, ուր է տեսարանն ողբերգութեան: 1,50

— Նոյնն հանդերձ գաղղիարէն բնագրաւ: 2,50

ՊԻՏՈՅԻՑ. Հռետորական Նախակրթութիւնք Մովսեսի Խորենացւոյ, այն է ուսումն Ճարտասանութեան հետեւողութեամբ նախնի վարժապետաց Յունաց: Տպագրեալ հանդերձ ծանօթութեամբ և լուսաբանեալ 'ի ձեռն Յովհաննու Վ. Զօհրապեան յամի 1796: Տես Խորենացւոյ մատենագրութիւն: 5,

ՊՍԱԿ ԿՈՒՍԻՆ. Նուիրմունք զանազան աղօթից հանդերձ խորհրդածութեամբ, 'ի յիշատակ եօթն ցաւոց և եօթն խնդութեանց սրբոյ Կուսին: Տպեալ յամին 1794:

ՊՍԱԿ ՔՐԻՍՏՈՍԻ. տետրակ ջերմեռանդութեան առ Յիսուս, Թարգմանեալ յիտալականէ 'ի Հ. Ղուկաս Վ. Օղուլուխեան տպագրեալ 'ի 1810:

ՊՆԱԿ ԱՅԲՈՒԲԵՆԻՑ. Նոր կարգալ սկսող տղոց համար, Թերթի մը վերայ տպուած այբուբեն:

ՊՈՍՈՒԷԻ ԽՕՍՔ Ի ՎԷՊՍ ԱԶԳԱՑ. է երկհատոր ընտիր մատենագրութիւն Պոսուէի եպիսկոպոսի Մոյ քաղաքի Գաղղիոյ, որ խօսի ընդհանուր պատմութեան վերայ ընտիր խորհրդածութեամբ և գեղեցիկ ոճով: Թարգմանեալ 'ի Հ. Քերովբէ Վ. Աղնաւորեան, և տպագրեալ յամին 1841: 9,

ՊՈՏՐԱՆԴ ՔԱՀԱՆԱՅԻ ԽՐԱՏՔ. տես Ճշմարիտ դարձ:

ՊՕՂ ԵՒ ՎԻՐԳԻՆԻԱ. վիպասանութիւն սրտաշարժ և ընտիր Սէն-Բիէր գաղղիացւոյ. Թարգմանեալ ռամկօրէն լեզուաւ 'ի Մանուկ Պէյէ Աստուածատուրեան և տպագրեալ յամին 1846, և երկրորդ տպագրութիւն 'ի 1859:

— Նորին Թարգմանութիւն գրաբար յԱրքեպիսկոպոսէ Եդուարդայ Հիւմիւզեան: Տպագ. 'ի 1860: 3,50

## Ջ

ՋԱՏԱԳՈՎՈՒԹԻՒՆ ՈՒՂՂԱՓԱՌ ՀԱՒԱՏՈՑ ԸՆԴԴԷՄ ՆՈՐԱՂԱՆԴԻՑ. *շարադրեալ անգղիացի աւագերէց մը, և թարգմանեալ ռամկօրէն լեզուաւ. տպագրեալ յամին* 1844 : 1,50

## Ռ

ՌՈՏՈԼՓ ՀԱՒԲԵՐԴՈՒՆԻ. *վիպասանութիւն Հապըսպուրկ կայսերական ընտանեաց վերայ, երկոտասան երգ տաղաւոր : Յօրինեալ 'ի Լատիսլաւայ Բիրքէր, թարգմանեալ 'ի չափս հայկականս 'ի Հ. Ղեւոնդ Վ. Ալիշանեան, և նուիրեալ Փ. Յովսէփ Ա. կայսեր, երբոր իր կնոջմով վանքին այցելութեան եկեր էր* 1856 *դեկտ* 19 *ին : Տպագրեալ 'ի* 1858, *գերմաներէն և հայերէն միանգամայն :* 14,

ՌՈՏՐԻԿՎԵՅԻ ՅԱՂԱԳՍ ԵՐԻՑ ՈՒԽՏԻՑ. *գործ Ալփոնսոսի Ռոտրիկվեցի յիսուսեան կարգէն, որ կը ճառէ կրօնաւորական երից ուխտից վերայ՝ այսինքն հնազանդութեան, աղքատութեան և ողջախոհութեան : Թարգմանեալ 'ի Գերապատիւ Մխիթարայ աբբայէ և տպեալ 'ի* 1741 : *Նորոգ թարգմանեալ 'ի Հ. Մկրտիչ Վ. Աւգերեան, և տպագ. յամին* 1854 : 3,50

ՌՈԼԷՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀՌՈՎՄԷԱԿԱՆ. *վեց ընդարձակ հատոր. արարեալ Ռօլէնի գաղղիացւոյ, որ կը խօսի Հռովմայ հիմնարկութենէն մինչև հասարակապետութեան վերջը : Թարգմանեց իտալերէնէ Հ. Վրթանէս Վ. Ասկերեան, և բաղդատեց գաղղիարէն բնագրին հետ Հ. Մանուէլ Վ. Ջախջախեան, յաւելմամբ ծանօթութեանց. տպ. յամին* 1846–1847 : 75,

*— Նորին հնախօսութիւն, վեց ընդարձակ հատոր, Եգիպտացւոց, Կարքեդոնացւոց, Ասորեստանեայց, Բաբելացւոց, Մարաց, Պարսից, Մակեդոնացւոց և Յունաց հնախօսութեանց վերայ : Թարգմանեալ 'ի գաղղիական բնագրէ 'ի ձեռն երկուց հարազատաց Հ.*

Գէորգայ և Հ. Եդուարդայ Հիւրմիւզեանց. տպագրեալ յամին 1825–1829: 75,

ՌՈԲԻՆՍՈՆ. օգտակար և զուարճալի վիպասանութիւն, յօրինեալ անգղիարէն, և յետոյ համառօտեալ գերմանացիէ մը 'ի 1779. որ ապա թարգմանեցաւ գաղղիարէն, և գաղղիարէնէ 'ի հայ ռամիօրէն լեզուաւ, ձեռամբ Հ. Մինաս Վ. Բժշկեան. տպեալ առաջին անգամ 'ի 1817, վերջին անգամ 'ի 1858: 3,50

## Ս

ՍԱԼԵԶԱՅԻ. հոգեշահ մատեան, յօրինեալ 'ի սրբոյն Ֆրանչիսկոսէ սալեզեան. թարգմանեալ 'ի Սարգիս Վ. Սառաֆեան, Արքեպիսկոպոսէ Կեսարիոյ. թարգմանութիւն նորոց շարադրութեամբ: Տպագ. յամին 1748: Սորա վերջին աշխարհաբար թարգմանութիւնը տես Աստուածասէր: 2,50

ՍԱԼՈՒՍՏԻՈՍ. փոքրիկ մատեան Կայիոսի Սալուստիոսի, լատին հեղինակի որ ճառէ Կատիլինեան դաւակցութեան և Յուգուրթեան պատերազմին վերայ: Թարգմանեալ 'ի Հ. Աբրահամ Վ. Ճարեան. տպագրեալ յամին 1856: 2,50

ՍԱՂՄՈՍ. մեծ գրով, և միջակ վասն դպրոցաց. տպեալ այլ և այլ անգամ:

— Նոյնն փոքրագիր, որ կը գործածուի իբրև աղօթագիրք. տպեալ բազում անգամ. վերջին տպագրութիւն 'ի 1865: 1,75

ՍԵԲԵՐԻԱՆՈՍԻ եպիսկոպոսի Գաբաղացւոց ճառք հնգետասան այլ և այլ նիւթոց վերայ: Թարգմանութիւն նախնեաց հինգերորդ դարու: Տպ. յամին 1830: 4,

— Նոյնն հայ լատին. տպագրեալ 'ի 1827: 8,

— Նոյնն ընդ Բարսղի վեցօրէից արարչութեան: 7,

ՍԵՂԱՆ ԽՆԿՈՑ. աղօթագիրք տէրունական տօնից և ամեն կիրակէից. յօրինեալ 'ի Հ. Միքայէլ Վ. Չամչեան. տպագրեալ յամին 1817: 3,50

ՍԵՆԵԿԱ. Ղուկիոսի Աննէոսի Սենեկայ լատին Մատենագրի ճառք իմաստասիրականք, եօթն գիրք

բաժնած․ ընտիր մատենագրութիւն, զոր Թարգմանեց ՚ի լատինէ Հ․ Մկրտիչ Վ․ Աւգերեան․ տպագրեալ յամին 1849։ 9,50

ՍԷԿԻԻՐ․ խորհրդածութիւնք ՚ի Յիսուս Քրիստոս․ ընտիր փոքրիկ մատեան, որ խօսի Քրիստոսի վարուց և վարդապետութեանց վերայ։ Թարգմանեաց ռամկօրէն լեզուաւ ՚ի Գաղղիարենէ Հ․ Վահան Պօյաճեան, և տպագրեցաւ յամին 1861։ 2,50

ՍԻԼՎԻՈՅ ՓԷԼԼԻՔՈՅ․ Խտալացի հռչակաւոր մատենագրին Յաղագս մարդկային պարտուց գրքին Թարգմանութիւնը ռամկօրէն լեզուաւ․ որ է օգտակար փոքրիկ մատեան պատանեաց համար․ տպագ․ յամին 1854։ 1,50

ՍԻՐԱՔ․ Իմաստութիւն Յեսուայ որդւոյ Սիրաքայ և Թուղթ Երեմիայ մարգարէի առ գերեալսն ՚ի Բաբելոն, ընտիր Թարգմանութիւն Նախնեաց․ որ է բարոյական աքանչելի գրուած․ տպագ․ յամին 1833։ 1,50

* ՍԿԶԲՈՒՆՔ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ․ գիրք հոգևոր կրթութեան ՚ի պէտս բարի քրիստոնէից, Թարգմանեալ ՚ի Թէոդորոս վարդապետէ, տպագրեալ ՚ի 1744։

ՍՄԲԱՏ Ա․ Ողբերգութիւն արձակ շարադրութեամբ․ յօրինեալ ՚ի Հ․ Պետրոս Վ․ Մինասեան, և տպեալ ՚ի 1845։ 2,

ՍՈՓԵՐՔ ՀԱՅԿԱԿԱՆՔ․ մանր մունր գործ նախնեաց Հառական, բարոյական և պատմական, այլ և այլ դարու և այլ և այլ անձանց, առանձինն ՚ի քսան և երկու մանր հատորս, և միանգամայն ՚ի չորս հատորս բովանդակեալ․ տպեալ ՚ի 1853–1854–1863։ 22,

ՍՊԱՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՏԷՏՐ․ փոքրիկ տետր մի, որ տղայոց Պատարագի խորհրդոյն սպասաւորելու կերպը կ՚ուսուցանէ։ Տպեալ բազում անգամ, և վերջին տպագրութիւնը եղած է ՚ի 1861։ 0,25

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ․ որ է պատմութիւն հին և նոր օրինաց և եկեղեցւոյ Քրիստոսի։ Յօրինեալ ՚ի Հ․ Մինաս Վ․ Բժշկեան, երկու միջակ հատոր։ Առաջին հատորոյն մէջ խօսի հին և նոր կտակարանի պատմութեան, և եկեղեցւոյ մէջ ծագած հերետիկոսաց վերայ․ երկրորդ հատորոյն մէջ սրբազան քահանա-

յաւետաց վերայ 'ի սրբոյն Պետրոսէ մինչև 'ի Գրիգոր ԺԶ: Տպեալ 1836: 11,

## Վ

ՎԱՐԴԱՆ ՊԱՏՄԱԳԻՐ. գրուած Նախնեաց՝ Վարդանայ աշակերտի Վանական վարդապետի յերեքտասաներորդ դարուն, որ կը պատմէ համառօտ 'ի սկզբանէ աշխարհի մինչև ցՀեթում Ա. Թագաւոր Ռուբինեանց և մինչև ցմահ Կոստանդեայ կաթուղիկոսի ցամ Տեառն 1267: Տպագրեալ կարևոր ծանօթութեամբք յամին 1862: 4,50

ՎԱՐԴԱՐԱՆԻ ԱՂՕԹՔ. փոքրիկ տետր տպեալ այլ և այլ անգամ: 0,60

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՆՑ. ողջ գրավարժութեան բացուելուն համար փոքրիկ մատեան աշխարհաբար լեզուաւ, յօրինեալ 'ի Հ. Մինաս Վ. Բժշկեան. տպեալ առաջին անգամ 'ի 1826. և վերջին անգամ 'ի 1860: 2,50

ՎԱՐՔ ԻՄԱՍՏԱՍԻՐԱՑ. պատմութիւն վարուց երևելի հին իմաստասիրաց, Թուով քսան և վեց, յօրինեալ Թարգմանաբար 'ի Հ. Յակոբոս Վ. Ճելալեան. մի հատոր ութածալ, տպագրեալ 'ի 1826: 3,50

ՎԱՐՔ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ. համառօտ պատմութիւն վարուց սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի, յօրինեալ 'ի Հ. Մատթէոս Վ. Եւդոկիացի, տպ. 'ի 1749:

— Նոյն տաճկերէն, յօրինեալ 'ի Հ. Դանիէլ Վ. Պօլսեան, մի հատոր վեշտասանածալ, տպ. 'ի 1839: 2,50

ՎԱՐՔ ՀԱՐԱՆՑ. պատմութիւն վարուց սրբոց հարց Եգիպտացւոց. գործ Նախնեաց ըստ կրկին Թարգմանութեան, մին հին, միւսն երկոտասաներորդ դարու. երկու հատոր քառածալ. տպ. 'ի 1855: 24,

ՎԱՐՔ ՍՐԲՈՑ. լիակատար պատմութիւն սրբոց զորս տօնէ Հայաստանեայց եկեղեցի. բաժանեալ երկոտասան հատոր, հանդերձ ծանօթութեամբք և զանազան պատկերօք սրբոց. և վերջին հատորն է համառօտ պատմութիւն վարուց սրբոց յիշատակելեաց

կայսմաւուրս, և այլոց ծանօթ սրբոց ըստ կարգի այ-բուբենից: Ցօրինեալ 'ի Հ. Մկրտիչ Վ. Աւգերեան տպագրեալ 'ի 1810–1814: 48,

— Նոյն դարձեալ առանց ծանօթութեանց մեծադիր և միահատոր. տպագրեալ 'ի 1810: 27,50

ՎԱՐՔ ՍՐԲՈՑ ՀԱՄԱՌՕՏ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ. մի հատոր ութածալ, որոյ մէջ գրուած են միայն երևելի սրբոց վարուց պատմութիւնքը: Ծաղկաքաղ հաւաքեալ 'ի Հ. Ղուկաս Վ. Ինճիճեան. տպագրեալ առաջին անգամ 'ի 1832 և վերջին անգամ 'ի 1861: 3,50

ՎԱՐՔ ՍՐԲՈՑ ՀԱՄԱՌՕՏ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ. մի հատոր ութածալ, որոյ մէջ գրուած են վերի համառօտ սըրբոց վարուց մէջէն դուրս մնացած ուրիշ երևելի սըրբոց և սրբուհեաց վարքը. տպագրեալ 'ի 1850: 3,50

ՎԱՐՔ ՍՐԲՈՑ ԼԱՏԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ. մի հատոր փոքրիկ աշխարհաբար, որոյ մէջ գրուած են լատին եկեղեցւոյ մէջ տօնելի երևելի սրբոց վարուց պատմութիւնը. տպագրեալ 'ի 1840: 4,

ՎԱՐՔ ՍՐԲՈՑ ԿՈՒՍԱՆԱՑ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ. տես Վարք սրբոց համառօտ աշխարհաբար:

ՎԱՐՔ ՍՐԲՈՅՆ ԱՆՏՈՆԻ ԱՆԱՊԱՏԱԿԱՆԻ. յօրինեալ 'ի սրբոյն Աթանասէ Աղեքսանդրիոյ հայրապետէ, և նորոգ թարգմանեալ 'ի լատինէ 'ի Հ. Բարսեղ Վ. Ղալըճեան. տպագրեալ 'ի 1794: Նորին թարգմանութիւն նախնեաց տպագրեալ երկհատոր Հարանց վարուց մէջ:

— *Դարձեալ, սրբոյն Անտոնի անապատականի վերայ այլ և այլ մատենագիրներէ պատմուած գործոց հաւաքումն: Աշխատասիրեալ 'ի սրբոյն Աթանասէ և թարգմանեալ 'ի Հ. Բարսեղ Վ. Ղալըճեան. տպագրեալ 'ի 1800: 2,

ՎԱՐՔ ՍՐԲՈՅՆ ԱՂԵՔՍԻԱՆՈՍԻ. փոքրիկ տետր, յօրինեալ աշխարհաբար լեզուաւ և տպագրեալ բազում անգամ. նախ 1800ին և վերջին անգամ 'ի 1853: 0,40

ՎԱՐՔ ՍՏԵՓԱՆՈՍԻ ԱԳՈՆՑ ՀԱՅԵՐԷՆ ԵՒ ԼԱՏԻՆԵՐԷՆ. է պատմութիւն վարուց Ստեփանոսի Ագոնցի արքեպիսկոպոսի և երրորդ աբբայի Մխիթարեան միաբանութեան Վենետկոյ. տպագրեալ 'ի 1825:

— Գովեստ 'ի նոյն խաչերէն. տպագ. 'ի 1825։

ՎԻՏԱՅԻ ՔՐԻՍՏՈՍԱԿԱՆ. *քերթուած ընտիր Մարկոսի Հերոնիմոսի Վիտայ կոչեցելոյ, եպիսկոպոսի Ալբեյ 'ի վեշտասաներորդ դարու. բաժանեալ վեց երգ. Քրիստոսի տեառն մերոյ անօրինական խորհրդոց վերայ։ Թարգմանեաց Հ. Եղիա Վ. Թոմաճանեան 'ի յանգաւոր ոտանաւոր. տպագրեալ 'ի 1833։* 4,25

ՎԻՐԳԻԼԵԱՅ ԵՆԷԱԿԱՆ. *Պօպլիոսի Վիրգիլեայ Մարոնի լատին բանաստեղծին քերթուածը երկոտասան երգ բաժնած, որոյ մէջ կ'երգէ Ենէասայ տրովացւոյ քաջութիւնները, և Իտալիոյ մէջ իր տէրութեան հաստատութիւնը, է առաջին 'ի բանաստեղծս լատինացւոց, զոր ընտիր հայկաբանութեամբ և յանգաւոր ոտանաւորով Թարգմանեաց Հ. Եդուարդ Վ. Հիւրմիւզեան հանդերձ ծանօթութեամբք։ Տպագրեալ պատկերազարդ 'ի 1845։* 12,

— *Նորին Մշակականք. չորս գիրք բաժնած, որոյ մէջ կը խօսի երկրագործութեան վերայ, Թարգմանեաց հայկական չափով Հ. Արսէն Վ. Բագրատունի հանդերձ ընդարձակ ծանօթութեամբք։ Տպագրեալ 'ի 1847։ Վիրգիլեայ Մշակականաց հետ 'ի միասին կազմեալ է նոյն Թարգմանչին Որատեայ քերթողական արուեստը։* 9,25

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ԳԼԽԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅՆ. *է քաղուած վկայութեանց որք գտանին մեր նախնեաց գրոց մէջ Պետրոսի առաքելոյն և անոր յաջորդաց գլխաւորութեան վերայ։ Թարգմանեալ 'ի լատին լեզու 'ի Հ. Մկրտիչ Վ. Աւգերեան։ Տպագ. երկլեզեան հայ և լատին 'ի 1804։*

## Տ

ՏԱՂԱՐԱՆ. *այլ և այլ սրբազան երգոց հաւաքումն, յօրինեալ 'ի Մխիթար աբբայէ, որոյ հետ կազմեալ է իր Քրիստոնէական վարդապետութիւնը և տպագրեալ է 'ի 1771։* 2,25

ՏԱՂՔ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԱՑ. *երեք հատոր*

մեծագիր, որ և կայ 'ի միասին կազմեալ: Առաջին հատորոյն մէջ բովանդակին Հ. Արսէն Բագրատունի վարդապետին տաղերը՝ սրբազան, ազգային և արտաքին նիւթոց վերայ. կան նաև 'ի վերջս զանազան թարգմանութիւնք: Բովանդակն է յանգաւոր ոտանաւոր, գործ զուարճալի: Երկրորդ հատորոյն մէջ բովանդակին Հ. Գաբրիէլ Աւետիքեան Հ. Մանուէլ Ջախջախեան և Հ. Եղիա Թովմաճանեան վարդապետաց, ոտանաւոր գործերը, ընտրանօք: Երրորդ հատորոյն մէջ բովանդակին Հ. Եդուարդ Հիւրմիւզեան Շիրակայ արքեպիսկոպոսին գեղեցիկ տաղերը, այլ և այլ նիւթոց վերայ, և 'ի վերջս զանազան թարգմանութիւններ: Տպագրեալ 'ի 1852–1854: 22,

ՏԱՌՔ ՄԵՍՐՈՊԵԱՆ. հայկական գլխագրաց օրինակք վեշտասան տախտակ մեծութեամբ, յօրինեալ 'ի Հ. Յովհաննէս Վ. Զօհրապեան, տպագ. 'ի 1816:

ՏԱՐԵԿԱՆ ԱՌԱԾՔ. են հոգեշահ մտածականներ տարւոյն իւրաքանչիւր օրերուն համար առանձինն առաւօտեան և երեկոյեան մտածականներ. հաւաքեալ Ս. Իգնատիոսի Լոյոլեան և Ս. Ֆրանչիսկոսի Քսաւերեան և ուրիշ սուրբ վարդապետաց գրուածներէն. թարգմանեաց 'ի լատինէ Հ. Մկրտիչ Վ. Աւգերեան, տպագրեալ 'ի 1825: 4,

ՏԱՐԵՐՔ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ. 'ի պէտս ազգային վարժարանաց աշխարհաբար լեզուաւ, որ կը խօսի ժամանակագրութե՜ գիտութեան և զանազան թուականներու վերայ: Յօրինեալ 'ի Հ. Ռափայէլ Վ. Թրեանց. տպագրեալ 'ի 1857: 1,

ՏԱՐԵՐՔ ՀԱՅԵՐԷՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ. համառօտ և ընտիր քերականութիւն հայերէն լեզուի դպրատան տղայոց համար. յօրինեալ 'ի Հ. Արսէն Վ. Բագրատունի. տպագրեալ առաջին անգամ 'ի 1847, և վերջին անգամ 'ի 1860: 2,50

* ՏԱՐԵՐՔ ՉԱՓԱԲԵՐՈՒԹԵԱՆ. բաժանեալ երկու հատոր. առաջին հատորն է երկրաչափութիւն, և երկրորդ հատորը գրահաշիւ, բարձրագոյն դպրոցաց համար. յօրինեալ 'ի Հ. Հմայեակ Վ. Պալեկեան տպագրեալ 'ի 1858:

* ՏԱՐԵԳՐՈՒԹԻՒՆ. զանազան փոքրիկ տետրակներ այլ և այլ ժամանակ տպագրեալ, աշխարհաբար լեզուաւ, որոց մէջ բովանդակին քաղաքական դիպուածներ, բանասիրական տեղեկութիւններ, պատերազմական դէպքեր և այլ և այլ գիտելիք։ Յօրինեալ 'ի Հ. Ղուկաս Վ. Ինճիճեան. տպ. 'ի 1799–1802։

ՏԵԼԵՄԱՔ. վիպասանութիւն ընտիր Ֆենելոնի Գաղղիացւոյ արքեպիսկոպոսի Քամպրէի, որ Լուդովիկոսի ԺԴ Թագաւորին որդւոյն դաստիարակ ըլլալով, յօրինեց անոնց կրթութեան համար այս սքանչելի գործը։ Կրկին թարգմանութիւն ունիմք հայերէն. մին 'ի Հ. Մանուէլ Վ. Ջախջախեան. տպագ. 'ի 1826. միւսն է ընտիր հայկաբանութեամբ և պատկերազարդ՝ Հ. Եդուարդայ Վ. Հիւրմիւզեան, արքեպիսկոպոսէ Շիրակայ, տպագրեալ 'ի 1850։ 13,

— Նոյնն փոքրադիր տպագրեալ 'ի 1864։

** ՏԵՍԱՐԱՆ ԱՇԽԱՐՀԻ. կարևոր տեղեկութիւնք բնական իրաց, կենդանեաց և իմացական բնութեան՝ այսինքն մարդկան և հրեշտակաց. բաժանեալ երեք գիրք։ Յօրինեալ 'ի Հ. Յակովբ Վ. Ստեփանեան. տպ. 'ի 1810։ 3,50

ՏԵՍՈՒԹԻՒՆ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ. պարզաբանութիւն ամբողջ աստուածաշունչ գրոց հարկաւոր քննութք ժամանակագրական գիտելեաց. գործ պիտանի և կարևոր, չորս հատոր բաժնած։ Յօրինեալ 'ի Հ. Ստեփանոս Վ. Ագոնց, արքեպիսկոպոսէ և ընդհանրական աբբայէ Մխիթարեանց. տպագ. 'ի 1819։ 16,

ՏԵՍՈՒԹԻՒՆ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ. լուսաբանութիւն ամբողջ Նոր կտակարանի վերայ, այսինքն Աւետարանի, Գործոց առաքելոց և Պօղոսի թղթոց. երեք հատոր բաժնած՝ գործ պիտանի և կարևոր, յօրինեալ 'ի Հ. Ստեփանոս Վ. Ագոնց, արքեպիսկոպոսէ և ընդհանրական աբբայէ Մխիթարեանց. տպագրեալ 'ի 1824։ 16,

** ՏԵՍՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ. համառօտ աշխարհագրութիւն հանդերձ ստորագրութեամբ աշխարհաց, թագաւորութեանց, գաւառաց և իւրաքանչիւր բերոց։ Յօրինեալ 'ի Հ. Ղուկաս Վ. Ինճիճեան. տպագրեալ 'ի 1791։

** ՏԵՏՐԱԿ ՀՈԳԵՒՈՐ ԽԱՂՈՒ․ *յօրինեալ 'ի Մխիթարայ աբբայէ վասն մանկանց․ տպագրեալ բազում պատկերօք յամին* 1775։

** ՏԵՏՐԱԿ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԵԱՆ ԸՆԴ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀՆԴԿԱՍՏԱՆ․ *է ճանապարհորդութիւն Թաշաանուն յիսուսեան աստղաբաշխի 'ի Սիամ։ Ծաղկաքաղ հաւաքեալ 'ի զանազան պատմագրաց 'ի ձեռն Հ․ Մատաթիա Վ․ Փիւսիւլճեան աշխարհաբար լեզուաւ․ տպագրեալ 'ի* 1815։

** ՏԵՏՐԱԿ ՆԵՐՈՂՈՒԹԵԱՆՑ․ *աղօթք ներողութեանց հաւաքեալ 'ի Սօֆեալեան Սահակ Վարդապետէ տաճկերէն լեզուաւ․ տպագրեալ 'ի* 1791։

** ՏԵՏՐԱԿ ՕԴԱՊԱՐԻԿ ԳՆՏՈՑ, *է պատմութիւն օդային ճանապարհորդութեան առաջին գտողաց օդապարիկ գնտոյ։ Յօրինեալ 'ի Հ․ Եղիա Վ․ Էնտազեան․ տպագրեալ 'ի* 1785։

ՏԸԼԱՖՈՐԻ ԵՂԾ ԱՂԱՆԴՈՑ ԼՈՒՏԵՐԻ ԵՒ ԿԱԼՎՆՈՑ․ *փոքրիկ և օգտակար գրքոյկ մը Լուտեր և Կալվին նորաղանդից դէմ, վեց տրամախօսութիւն վարդապետի և նորաղանդի մէջ․ յօրինեալ 'ի Տըլաֆոր քահանայէ գաղղիացւոյ և թարգմանեալ աշխարհաբար լեզուաւ 'ի Հ․ Եղիա Վ․ Թոմաճանեան․ տպ․ 'ի* 1847։ 2,25

ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԵՆԱՑ․ *պիտանի խրատներ այլ և այլ բարոյական նիւթոց վերայ, թարգմանեալ 'ի սինեկացւոց լեզուէ անգղիարէն, և յանգղիարէնէ 'ի հայ, 'ի ձեռն Գէորգ Աւետ Զաքարեան Ջուղայեցւոյ 'ի Պաթաւիայ․ տպագ․ 'ի* 1845։ 1,25

ՏՈՄԱՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ․ *ուսումն տոմար շինելու և անոր կարևոր գիտելեաց վերայ, հանդերձ աղիւսակներով։ Կայ մէջը և մասնաւոր գիտելիք նոր տոմարի, և ծուազատկի։ Յօրինեալ 'ի Հ․ Խաչատուր Վ․ Սիւրմէլեան․ տպագրեալ 'ի* 1818։ 3,50

ՏՈՒՄԱՐ ԼԵՒՈՆԻ․ *է կոնդակ սրբոյն Լևոնի Հռովմայ հայրապետի առ Փլաբիանոս եպիսկոպոս Կ․ Պօլսոյ, և սահման սուրբ ժողովոյն Քաղկեդոնի։ Թարգմանեալ յոյն և լատին լեզուներէ 'ի հայ՝ 'ի Հ․ Մկրտիչ Վ․ Աւգերեան․ որոյ մէջ կան և համաձայն*

վկայութիւնք 'ի Նախնի հարց մերոց և որդոյն Կիւրղի: Տպագրեալ երեք լեզուաւ, այսինքն յունարէն լատիներէն և հայերէն, յամին 1805: 2,

ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՍՈԱՒԷԻ. գիտութիւն օգտակար, որ ուսուցանէ բարւոք խորհել և խօսել: Գործ Սոաւէի իտալացւոյ, թարգմանեալ 'ի հայ 'ի Հ. Արսէն Վ. Բագրատունւոյ. տպագրեալ 'ի 1825, և կրկին անգամ ուղղագրութեամբ յամին 1857: 4,50

ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՏԻՒՄԱՐՍԷԻ ԳԱՂՂԻԱՑՒՈՑ. Թարգմանեալ 'ի հայ 'ի Հ. Մեսրոպայ Վ. Ալաճեանց. տպագրեալ 'ի 1845: . 2,50

ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԹՐՈՒՋԻ ՆԷԱՊՈԼՍԵՑԻ ԻՏԱԼԱՑԻ ՔԱՀԱՆԱՅԻ. Թարգմանեալ աշխարհաբար 'ի Հ. Ռափայէլ Վ. Թրեանց վասն դպրոցաց. տպագ. 'ի 1856: 3,

ՏՕՆԱՑՈՅՑ. է ցուցակ տօնից և եկեղեցական արարողութեանց հայաստանեայց եկեղեցւոյ. տպագրեալ 'ի 1782: — Տես և Մշտնջենաւոր պարզատումար: 2,

## Փ

ՓԱԲԻՈԼԱ, կամ ստորերկրեայ գերեզմանաց եկեղեցի, գեղեցիկ վիպասանութիւն Ուայզմէն ծիրանաւորի անգղիացւոյ, որոյ մէջ կը ստորագրէ հին քրիստոնէից կենցաղավարութիւնը, որ կը բնակէին Հռոմայ գետնադամբանաց մէջ: Թարգմանեալ աշխարհաբար յաշակերտաց չորրորդ դասու Ռափայէլեան վարժարանին, և տպագրեալ 'ի 1857: 5,50

ՓԱՒՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԱՑԻ. Ժամանակակից պատմութիւն Հայոց, որ կը պատմէ Խոսրով Բ թագաւորին ժամանակէն մինչև Արշակունեաց թագաւորութեան վերջը: Է գործ նախնեաց հինգերորդ դարու. հեղինակն էր յոյն եպիսկոպոս 'ի վերին Հայս. ուստի ըստ ոմանց կարծի յունարէն գրեալ և ապա թարգմանեալ 'ի հայ 'ի թարգմանչաց, բայց հաւանական թուի գրեալ հայերէն. բայց է առասպելախառն պատմութիւն: Տպագրեալ 'ի 1832: 6,

ՓԵԴՐՈՍ. Ողբերգութիւն Յ. Ռասինի Գաղղիա-

ցւոյ Թարգմանեալ 'ի Հ. Եղուարդ Վ. Հիւրմիւզեան, արքեպիսկոպոսէ Շիրակայ, տպագրեալ 'ի 1861։ 1,50

ՓԵԴՐՈՍ. առակախօս լատին, նման առակաց Եզովպոսի Թարգմանեալ 'ի չափս հայկականս 'ի Հ. Եղուարդայ Վ. Հիւրմիւզեան, Արքեպիսկոպոսէ Շիրակայ. և տպագրեալ 'ի 1855։ 5,

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆ ԿՈՎԴՆՈՑ. չորս հատոր բաժանած, այսինքն՝ տրամաբանութիւն, բնաբանութիւն, համաբնաբանութիւն և բարոյական։ Յօրինեալ յԱնտոնէ Կովդնոյ, և Թարգմանեալ 'ի լատինէ 'ի ձեռն Հ. Վրթանէս Վ. Ասկերեան. տպագրեալ 'ի 1750։ 12,

ՓԻԼՈՆ ԵԲՐԱՅԵՑԻ. Թարգմանութիւն նախնեաց հինգերորդ դարու երկու հատոր առանձինն։ Առաջին հատորոյն մէջ են մեկնութիւն Ծննդոց, Ելից և այլն.... և երկրորդ հատորոյն մէջ երեք ճառք յաղագս նախախնամութեան և կենդանեաց, որք պակասին 'ի յոյնն և 'ի լատին։ Թարգմանեալ 'ի լատին բարբառ 'ի ձեռն Հ. Մկրտիչ Վ. Աւգերեան, և տպագրեալ հայերէն և լատիներէն հանդերձ հատուկտր ծացուածովք յաւանականին, յամի 1822։ 7,

ՓՕՓ. Աղեքսանդր Փօփ անգղիացւոյն մարդոյս վերայ բարոյական մտածութիւններ. Թարգմանեալ Իտալերէնէ 'ի տաճկերէն 'ի ձեռն Պարոն Յովհաննու Իւրէմեան. տպագրեալ 1861։ 1,50

## Ք

ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆ. Կ'աւանդէ մարդկային կենակցութեան օգտակար և պիտանի կանոններ։ Գործոյն վերջը կայ համառօտութիւն մը աշխարհաբար 'ի պէտս մանկանց։ Յօրինեալ 'ի Հ. Իգնատիոս Վ. Փափազեան տպագրեալ 'ի 1806։ 2,

ՔԱՌԹՈՒԼԷՐ ԿԱՄ ՀԱԽԱՔՈՒՄՆ ՅԻՇԱՏԱԿԱԳՐԱՑ, հրովարտակաց, գաշնագրոց և արտօնութեանց շնորհելոց Ռուբինեան Հայոց Թագաւորներէն Եւրոպիոյ ազգաց և պետութեանց, խմբագրեալ գաղղիերէն 'ի Լանկլուայ հայագէտ գաղղիացւոյ և տպագրեալ պատմական ծանօթութեամբք յամի 1863։ 15,

* ՔԱՐՈԶԳԻՐՔ ԵՕԹՆԿԱՐԳԵԱՆ. Համառօտ քարոզներ յօրինեալ սուրբ Գրոց վկայութեամբ, և սրբոց Հարց և վարդապետաց խօսքերով։ Թարգմանեալ 'ի Հ. Վրթանէս Վ. Ասկէրեան։ Տպ. 'ի 1781։

ՔԱՐՈԶԳԻՐՔ ՆՈՐ ՔԱՌԱՍՆՈՐԴԱԿԱՆՔ. կամ Համընտիր քարոզներ քառասունըչորս թուով, Թարգմանաբար հաւաքեալ Իտալացի և Գաղղիացի քարոզիչներէ 'ի Հ. Եղիա Վ. Թոմաճանեան։ Տպ. 'ի 1852։ 12,

ՔԵՐԱԿԱՆ, տղայոց ուսման համար։ Վերջին տպագրութիւն 'ի 1862։ 0,25

* ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ, աշխատասիրութեամբ Մխիթարայ աբբայի, տպ. 'ի 1730 և 1770։

* * ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ Հ. ՄԻՔԱՅԷԼ Վ. ՉԱՄՉԵԱՆ, բուն ընտիր հայկաբանութեան կանոնաց համեմատ։ Տպագրեալ 'ի 1779։ 5,50

— Նոյն քերականութեան համառօտութիւնը, դպրոցաց կիրառութեան համար։ Տպագ. 'ի 1801։

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ Հ. ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱՒԵՏԻՔԵԱՆ, նոր քննութիւններով և կարգով յօրինեալ. առաջին գիրքը աշխարհաբար, իսկ երկրորդ գիրքը գրաբար լեզուով։ Տպագրեալ 'ի 1815։ 5,50

— Նոյն քերականութեան համառօտութիւնը, երկասիրութեամբ Հ. Գաբրիէլ Վ. Աւետիքեան, ռամկօրէն լեզուաւ, ուսանողաց դիւրութեան համար։ Տպագրեալ 'ի 1819։ 3,

— Նոյն քերականութեան համառօտութիւնը գրաբար, դարձեալ նոյն հեղինակին երկասիրութեամբ։ Տպագրեալ 'ի 1823։ 3,

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԵՐԷՆ Ի ՊԷՏՍ ԶԱՐԳԱՑԵԼՈՑ. նոր և հմուտ քննութեամբք և տեսութեամբք Հայոց լեզուին վերայ։ Երկասիրութիւն Հ. Արսէն Վ. Կ. Բագրատունւոյ։ Տպագրեալ 'ի 1852։ 16,

— Նոյն քերականութեան համառօտութիւնը։ Տես Տարերք։

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴՈՒՌՆ. Համառօտ քերականութիւն հայերէն լեզուի ուսանողաց համար։ Տպագրեալ 'ի 1835։ 2,

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ, *քիչ ատենի մէջ հայերէն շարադրութեան վարժելու համար: Տպագրեալ 'ի* 1836: 2,

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԼԱՏԻՆ ԼԵԶՈՒԻ, *որ ուսուցանէ նոյն լեզուին կանոններն ուսանողաց համար: Տպագ. յամին* 1839: 2,50

** ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԻՏԱԼԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ, *հայերէն և տաճկերէն բացատրութեամբք. հեղինակն է Աթանաս Վ. Մինասեան: Տպագրեալ 'ի* 1774:

** ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԹՈՍՔԱՆԵԱՆ ԼԵԶՈՒԻ, *հայերէն և տաճկերէն բացատրութեամբք, իտալերէն զրուցատրութեանց և այլ և այլ կրթութեանց օրինակներով: Երկասիրութիւն Հ. Գաբրիէլ Վ. Աւետիքեան: Տպագրեալ 'ի* 1792:

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ ԻՏԱԼԱԿԱՆ ԼԵԶՈՒԻ, *ռամկօրէն լեզուաւ, տղայոց համար: Տպ. 'ի* 1842: 2,50

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱՆԳՂԻԱՐԷՆ ԵՒ ՀԱՅԵՐԷՆ. *համառօտ և պարզ ոճով նոյն լեզուին ուսումը Հայոց ազգին դիւրացնելու համար: Աշխատասիրութիւն Հ. Յարութիւն Վ. Աւգերեան: Տպագ. յամի* 1816: 4,

— *Նոյնն ընդարձակագոյն, աւանդեալ 'ի քսան դասս 'ի Հ. Աւքսենտիոս Վ. Գուրգէնեան, գրաբար լեզուով և բազմապատիկ դիւրին և օգտակար կրթութեամբք և օրինակներով: Տպագրեալ 'ի* 1853: 5,50

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԵՐԷՆ ԵՒ ԱՆԳՂԻԱՐԷՆ, *հայերէն լեզուին ուսումը անգղիացւոց դիւրացունելու համար: Գործոյն վերջը կայ հատընտիր հաւաքումն ընտիր Հայոց մատենագիրներէն: Յօրինեալ 'ի Հ. Յարութիւն Վ. Աւգերեան: Տպագրեալ յամի* 1819:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԳԱՂՂԻԱՐԷՆ ԸՆԴԱՐՁԱԿ. *մի մեծ հատոր, որոյ մէջ կ'աւանդուին գաղղիարէն լեզուին կանոնները ճոխ օրինակներով և հայերէն գրաբար բացատրութեամբ, ազգայնոց համար. գործոյն վերջը կը խօսի գաղղիաբանութեան, ուղղագրութեան և ոտանաւորի վերայ: Յօրինեալ 'ի Հ. Արսէն Վ. Անթիմոսեան. տպագրեալ 'ի* 1821: 5,50

— *Նոյնն համառօտ, դպրոցաց համար, ռամկօրէն բացատրութեամբ: Տպագրեալ 'ի* 1849: 2,75

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԳԵՐՄԱՆԵՐԷՆ․ *որոյ մէջ կ'աւանդին գերմանացւոց լեզուին կանոնները հայերէն գրաբար բացատրութեամբ։ Գործոյն վերջը կայ հարկաւոր զրուցատրութիւններ գերմաներէն, հայերէն և տաճկերէն․ Նոյնպէս և համառօտ բառգիրք գերմաներէն – տաճկերէն․ և տաճկ – գերմ․ և հայ։ Յօրինեալ 'ի Հինտօղլու Կուտինացի Յարութենէ, վարժապետ տաճկ․ լեզուի 'ի Վիէննա․ տպ․ 'ի* 1830։ 5,

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՌՈՒՍԵՐԷՆ․ *ընդարձակ քերականութիւն որոյ մէջ կ'աւանդին Ռուսաց լեզուին կանոնները հայերէն գրաբար բացատրութեամբ։ Նուիրեալ է Աղեքսանդրի Ա․ կայսեր Ռուսաց։ Յօրինեալ 'ի Հ․ Մինաս Վ․ Բժշկեան․ տպագրեալ 'ի* 1828։ 6,

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԵՐԷՆ ԵՒ ՌՈՒՍԵՐԷՆ․ *Հայոց գրաբար լեզուին ուսումը Ռուսաց դիւրացնելու համար․ ռուսերէն բացատրութեամբ յօրինեալ 'ի Հ․ Մինաս Վ․ Բժշկեան․ տպագրեալ 'ի* 1840։ 6,

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԲԱԶՄԱԼԵԶՈՒԵԱՆ․ *քերականութիւն արաբացի, պարսիկ, օսմանեան և թաթար լեզուաց․ գրաբար բացատրութեամբ․ Նուիրեալ Նիկողայոս կայսեր Ռուսաց։ Յօրինեալ 'ի Հ․ Մինաս Վ․ Բժշկեան․ տպագրեալ 'ի* 1844։ 22,

ՔՐԻՍՏԻՆԷԱԿԱՆ ՔԵՐԹՈՒԱԾ․ *Քրիստինէ կուսին վերայ յանգաւոր քերթուած ոտանաւոր․ երեք երգ բաժնած․ յօրինեալ 'ի Հ․ Մովսէս Վ․ Ամպէրպօյեան․ տպագրեալ 'ի* 1843։ 2,25

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱՄԱՌՕՏ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԲԵՂԱՐՄԻՆՈՍԻ, *մանկահասակ տղայոց համար, հարցմամբ պատասխանեաւ։ Հեղինակութիւնն է Բելարմինոսի, ուսկից համառօտած է Հ․ Զաքարիա Վ․ Ալէքսանեան․ տպագրեալ 'ի* 1770, *և անկէ վերջը բազում անգամ տպագրեալ․ և վերջին անգամ 'ի* 1862։ 0,30

— *Նոյնն աւելի ընդարձակ, հարցմամբ պատասխանեաւ․ գործ Յովսէփայ Փիէրարտայ Յիսուսեան կրօնաւորի թարգմանեալ աշխարհաբար 'ի Հ․ Ռափայէլ Վ․ Թրեանց։ Տպագրեալ 'ի* 1854։ 1,

— *Նոյնն․ Մխիթարայ մեծի աբբայի ռամկօրէն*

լեզուաւ, որոյ մէջ կան նաև տաղք և շարականք իրմէ յօրինեալ: — Տէր Տաղարան. տպագրեալ'ի 1727 և երրորդ անգամ'ի 1771:

** Նոյնն Մխիթարայ մեծի աբբայի գրաբար լեզուաւ նորավարժ տղայոց համար, որոյ մէջ կայ նաև Այբբենարան: Տպագրեալ'ի 1725, և երկրորդ անգամ'ի 1750:

* Նոյնն համառօտ յանգաւոր ոտանաւոր, գրաբար լեզուաւ. յօրինեալ'ի Հ. Մկրտիչ Վ. Աւգերեան. տպագրեալ'ի 1811:

## Օ

ՕՐԱՑՈՅՑ. տարւոյն օրերը կը ցուցնէ և իւրաքանչիւր օրին տօները և պահքը: Նաև Յունաց լատինացւոց Հրէից և Տաճկաց գլխաւոր տօները. լուսնի փոփոխմունքը, օդոյ գուշակութիւնները և այլն: Յօրինեալ'ի Հ. Յակոբոս Վ. Չամչեան. սկսեալ յամէն 1757 և շարունակաբար հասեալ մինչև ցայժմ: 0,40

ՕԳՈՍՏԻՆՈՍԻ ՀԻՊՊՈՆԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ յաղագս Քաղաքին Աստուծոյ: Ընտիր և գեղեցիկ գրուած մը՝ ընտիր և հայկաբան թարգմանութեամբ Հ. Գաբրիէլ Վ. Աւետիքեան, երկու հատոր: Տպ. յամի 1841: 24,

— Նորին Առանձնախօսութիւնք և Առձեռնական. սրտաշարժ և ջերմեռանդ մտաւոր աղօթից. Թարգմանութիւն Հ. Եփրեմ Վ. Սեթեան: Տպագրեալ յամի 1858: 2,50

ՕՐՀՆՈՒԹԻՒՆՔ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ ԵՒ ԾԱՂԿԱՔԱՂ Ի ՍԱՂՄՈՍԱՑ. այն է Աստուածաշունչի հին կտակարանի մէջ եղած օրհնութիւններ և հատընտիր Սաղմոսներ հայկական չափով տաղաչափեալ և լուսաբանեալ'ի Հ. Եղուարդայ Վ. Հիւրմիւզեան արքեպիսկոպոսէ Շիրակայ, և տպագրեալ յամի 1864: 1,75

## Ֆ

ՖԱՍԸԼՔԵՆԱՐԻ ՄԷՔԹՈՒՊԼԵՐ. Զանազան նիւթերու վերայ բարոյական ընտիր խօսակցութիւններ նա-

մակի ձեռվ շարադրուած Գոսմանթինի անունով իտալացիէ մը, ու տաճկերէն Թարգմանուած Երեմեան Յովհաննէս աղային ձեռքով: Երկու հատոր. տպագրեալ յամի 1837 : 14,

ՓԵՆԵԼՈՆԻ ԽՐԱՏՔ, կամ Տնտեսութիւն մարդկային կենաց, համառօտ տետրակ մը խրատուց. գաղղիարենէ ռամկօրէն տանաւոր Թարգմանուած: Տպագրեալ յամի 1840:

— Նոյնն գրաբար Թարգմանուած, տպագրեալ յամին 1841:

— Նորին Դաստիարակութիւն աղջկանց: Աղջկանց դաստիարակութեան վերայ համառօտ՝ բայց գեղեցիկ գրուած մը՝ ցուցանելով անոր հարկաւորութիւնը և պէտքը: Թարգմանեալ ռամկօրէն լեզուաւ և տպագրեալ յամի 1850 : 2,75

ՓԷԼԻՉԷ ՌՈՊՈԼԻՆ ՎԵՐՋԻՆ ՎԱՅՐԿԵԱՆՆԵՐԸ. Սըրտաշարժ պատմութիւն Ռոպոլ անունով մահապարտի մը, որ առ Աստուած կը դառնայ, Ռոզմինի իտալացի վարդապետին գրուածքն է, ռամկօրէն լեզուաւ, Թարգմանեալ ՚ի Հ. Ռափայէլ Վ. Թրեանց: Տպագրեալ ՚ի 1850: 1,50

ՓԼԷՕՐԵԱՑ ԿԵՆՑԱՂ ԻՍՐԱՅԵԼԱՑԻՈՑ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԷԻՑ: Հրէից և նախնի քրիստոնէից սովորութեանց վերայ, Թարգմանեալ ՚ի Հ. Քերովբէ Վ. Աղնաւորեան: Տպագրեալ ՚ի 1843: 7,

— Նորին քրիստոնէական վարդապետութիւն՝ ընդարձակ և համառօտ, ռամկօրէն լեզուաւ: Թարգմանեալ ՚ի Հ. Անդրէաս Վ. Ծովլիզեան: Տպագրեալ ՚ի 1844: 2,75

ՓԼՈՐԻԱՆՈՒ՝ ՆՈՒՄԱ ՊՈՄՊԻԼԻՈՍ. վիպասանական և խրատական գրուածմը, գեղեցիկ Թարգմանութեամբ տեառն Հ. Եդուարդ Վ. Հիւրմիւզեան Արքեպիսկոպոսի Շիրակայ: Տպագրեալ ՚ի 1853: 4,50